ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ

(առ 30.12.2019թ.)

Սույն ուղեցույցը ներառում է ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների մասին տեղեկատվություն, մասնավորապես.

- քննության առնված ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը՝ ըստ այբբենական հերթականության.
- իրավական ակտի դրույթները՝ ըստ հոդվածների թվագրման հերթականության.
- վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված (ՀԱՓ) դրույթները.
- ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի համապատասխան կետերը՝ ըստ որոշման մեջ առկա համարակալման.
- ՀՀ սահմանադրական դատարանի որոշման ամսաթիվը:

Ուղեցույցը հնարավորություն կտա համառոտ և դասակարգված տեղեկատվություն ստանալ կոնկրետ իրավական ակտի (դրա տարբեր դրույթների) մասին ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընդունված բոլոր որոշումների վերաբերյալ: Ուղեցույցը նաև օգտակար կարող է լինել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության մեջ ներգրավված անձանց, ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների, հանրության լայն շրջանակի համար:

Սույն ուղեցույցը կազմել է ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր Արևիկ Պետրոսյանը:

N	ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը	Իրավական ակտի դրույթը	ՍԴ որոշումը	ՍԴ որոշման ամսաթիվը
1.	**«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք (ընդունվել է 20.02.2002թ. ուժը կորցրած է ճանաչվել 18.05.2017թ.)**	12 և 14-րդ հոդվածներ	**1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պատգամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին» դրույթը՝ քվեաթերթիկներում որպես ընտրական ցուցակի թեկնածուներ չնշված պատգամավորների առնչությամբ այնքանով, որքանով նպաստում է Ազգային ժողովում ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռության փոփոխությանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 7-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	30 հունիսի 2009 թվականի ՍԴՈ - 810
		35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի վերջին նախադասություններ, 49-րդ հոդվածի «ե» կետ, 112-րդ հոդվածի 2-րդ կետ, 4-րդ կետի վերջին	**1.** ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին ***հակասող և անվավեր*** ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 35 հոդվածի 3-րդ և 4-րդ - կետերի վերջին նախադասություններում, 112 հոդվածի 2-րդ կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ և 5-րդ կետով նախատեսված դրույթները: **2.** ՀՀ Սահմանադրության 62 հոդվածին ***հակասող և անվավեր*** ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 49 հոդվածի «ե» կետով նախատեսված դրույթը:	16 փետրվարի 2007 թվականի ՍԴՈ - 678

		նախադասություն և 5-րդ կետ		
		44-րդ հոդվածի 4-րդ մաս <u>ՀԱՓ</u> 99-րդ հոդվածի 4-8-րդ մասեր	**1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** Սույն գործով վեճի առարկա դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթները, այն մասով, որով առկա ընթացակարգերը պատգամավորի «լիազորությունների դադարում» սահմանադրական ինստիտուտը գործնականում փոխակերպում են ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ նրա «լիազորությունների դադարեցման» ինստիտուտի, ճանաչել ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***:	16 ապրիլի 2013 թվականի ՍԴՈ - 1081
2.	**«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունվել է 16.12.2016թ.)**	141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասեր	**2.** «Ազգային ժողովի կանոնակարգ»սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերը ճանաչել Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությանը, 166-րդ հոդվածի 9-րդ մասին և 167-րդ հոդվածի 3-րդ մասին ***հակասող***: **4.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված վիճարկվող դրույթների Սահմանադրությանը հակասող ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի խոչընդոտներ Սահմա-	6 նոյեմբերի 2018 թվականի ՍԴՈ - 1434

			նադրական դատարանի կազմի համալրման, ըստ այդմ, նրա բնականոն գործունեության և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու համար, որոնցով կխաթարվի վերոհիշյալ դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը՝ սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի ապրիլի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
3.	**«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունվել է 02.10.2018թ.)**	2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետեր	**1.** Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանը:	19 ապրիլի 2019 թվականի ՍԴՈ-1454
4.	**«Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27.12.1995թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.01.1999թ.)**	22-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր	**1.** «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի «Հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի համարժեք փոխհատուցման չափը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ հիմնվելով ՀՀ կառավարության և օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջև բանակցությունների արդյունքի և օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ գրավոր համաձայնության վրա», համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	27 փետրվարի 1998 թվականի ՍԴՈ - 92

			2. «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի երրորդ մասը, համաձայն որի «Եթե անշարժ գույքի սեփականատերը համաձայն չէ ՀՀ կառավարության կողմից գույքի օտարման կամ փոխհատուցման չափի հետ, ապա ՀՀ կառավարությունը անշարժ գույքի օտարումը կարող է իրականացնել միայն դատական կարգով», ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 8 և 28 հոդվածներին: Անձի սեփականությունը՝ ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում՝ պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օտարման բացառիկ կարևորությունն ու նշանակությունը և կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության և պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվելու: Օրենքը միաժամանակ կառավարությանը կպարտավորեցնի, համապատասխան ֆինանսատնտեսական հաշվարկի հիման վրա, շուկայական գների հաշվառմամբ, կառավարության և օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջև բանակցությունների արդյունքի և վերջինիս գրավոր համաձայնության հիման վրա սահմանել փոխհատուցման չափը, որը սեփականատիրոջ կողմից ենթակա է դատական վիճարկման: **3.** «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի չորրորդ մասը, համաձայն որի «Մինչև դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը հասարակության և	

			պետության կարիքների համար օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է ձեռնպահ մնալ անշարժ գույքին վնաս հասցնելուց», ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 8, 28 և 44 հոդվածներին: **4.** «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի հինգերորդ մասը, համաձայն որի «Հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է ՀՀ կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից», ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 8 և 28 հոդվածներին: ՀՀ կառավարությունը չի կարող հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք:	
5.	**«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 29.04.2010թ.)**	10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	**2.** «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը: **3.** «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	23 ապրիլի 2019 թվականի ՍԴՈ-1455
6.	**«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 14.05.1997թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.01.2018թ.)**	2-րդ հոդվածի 2-րդ մաս	**3.** «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	25 նոյեմբերի 2008 թվականի ՍԴՈ -780
7.	**«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից**	27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ	**1.** «Լառա Մովսեսյանի դիմումի հիման վրա՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող	11 ապրիլի 2017 թվականի

	բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 18.05.2010թ.)	ենթակետի «դ» մաս	պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	ՍԴՈ -1361
8.	**«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 07.05.2002թ.)**	10-րդ հոդվածի 3-րդ կետ	**1.** «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 3-րդ կետը սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած **իրավական դիրքորոշումների շրջանակներում** համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	26 մայիսի 2009 թվականի ՍԴՈ - 804
		13-րդ հոդված և 11-րդ հոդվածի 6-րդ կետ	**1.** «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	4 հոկտեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 990
9.	**«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 30.04.1996թ. ուժը կորցրած է ճանաչվել 06.12.2001թ.)**	71-րդ հոդվածի 8-րդ կետ և 93-րդ հոդվածի 4-րդ կետ	**1.** «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 8-րդ կետի նախապայմաններ սահմանող՝ «... նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել» դրույթը ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 38 և 39 հոդվածներին: **2.** «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 93 հոդվածի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	13 նոյեմբերի 1998 թվականի ՍԴՈ - 138
10.	**«Բաժնետիրական ընկերությունների մասին»**	56, 57 և 58-րդ հոդվածներ	**1.** «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը սույն որոշման մեջ սահմանադ-	13 հուլիսի 2010 թվականի

	ՀՀ օրենք (ընդունվել է 25.09.2001թ.)		բական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>** համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57 և 58-րդ հոդվածների սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը **կարճել**:	ՍԴՈ - 903
		88-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	28 հոկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ-1316
11.	**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 14.12.2004թ.)	6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 14-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** … «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով … գործի վարույթը **կարճել**: **2.** … «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	24 հունվարի 2014 թվականի ՍԴՈ - 1136
12.	**«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 24.09.2002թ.)	5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ	**2.** «Բնակչության պետական ռեգիստրի մասին»ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում ամրագրված նորմը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:</u>**	8 դեկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ-1244
13.	**«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 28.12.1998թ.)	7 և 19-րդ հոդվածներ	**1.** «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Բնապահպանական և բնօգտագործման վճարների	18 հուլիսի 2009 թվականի ՍԴՈ - 816

			մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածը՝ ՍԴՈ-753 և սույն որոշումների մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>** համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	
14.	**«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 14.04.1999թ.)	6-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այն բովանդակությամբ,</u>** համաձայն որի՝ **գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկացված լինելու կանխավարկածը չի ներառում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած և երրորդ անձի իրավունքներին անմիջականորեն առնչվող դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկածը և չի հանդիսանում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած դատական ակտի բողոքարկման համար դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետների հաշվարկման հիմք:** **2.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները սույն գործով դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված, մասնավորապես՝ որոշման եզրափակիչ մասի առաջին կետում բերված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող այլ մեկնաբանությամբ: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի	11 հոկտեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1120

			69-րդ հոդվածի 12-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:	
		24-րդ հոդվածի 6-րդ մաս և 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	**1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասն՝ այն մասով, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքներն այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում պետական գրանցման ներկայացնելու պահանջը չպահպանելը՝ առանց ժամկետը բացթողնելու պատճառները հաշվի առնելու, հանգեցնում է գործարքի անվավերությանը, ճանաչել Սահմանադրության 60, 75 և 78-րդ հոդվածներին ***հակասող***: **2.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ այն մասով, որ խոչընդոտում է հարգելի պատճառով 30-օրյա ժամկետի խախտմամբ ներկայացված դիմումների 15 հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, ճանաչել Սահմանադրության 60, 75 և 78-րդ հոդվածներին ***հակասող***: **3.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշ-	19 մարտի 2019 թվականի ՍԴՈ-1448

			վի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա գույքի, հատկապես՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ձեռքբերման օրինականությունը պատշաճ կերպով ապահովելու համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
		30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետ	**1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետում ամրագրված՝ «իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ամրագրված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**: **2.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի՝ «…կամ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական	4 փետրվարի 2014 թվականի ՍԴՈ - 1137

			ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին» դրույթը, այնքանով, որքանով այն կիրառվում է առանց օրենքով սահմանված դատական կամ արտադատական կարգով տվյալ ակտի անվավեր ճանաչման, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 5-րդ, 91-րդ և 108.1-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր:***	
		71-րդ հոդված <u>**ՀԱՓ**</u> 32-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 32-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 34, 51, 78, 79 և 80-րդ հոդվածներին ***հակասող***, այնքանով, որ տարբերակված մոտեցում չեն սահմանում, երբ տեղեկատվությունը վերաբերվում է անձի՝ իր մասին հայցվող տեղեկությանը, ինչպես նաև տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների իրացմանը։ **2.** Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի նոյեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական	23 փետրվարի 2016 թվականի ՍԴՈ-1256

			գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ հաշվի առնելով իրավունքների սահմանափակման առնչությամբ 2015թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրված նոր հստակեցումները:	
15.	**«Դատախազության մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 22.02.2007թ. **ուժը կորցրած է ճանաչվել 09.04.2018թ.**)	55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասություն	**1.** «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	4 մայիսի 2010 թվականի ՍԴՈ - 881
16.	**«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 05.05.1998թ.)	2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ և 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	**1. …** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, … համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	26 մայիսի 2015 թվականի ՍԴՈ - 1210
		18-րդ հոդված	**1.** «Կարինե Ամիրբեկյանի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	13 դեկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ - 1330
		23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր	**1. …** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետում ամրագրված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	22 մարտի 2016 թվականի ՍԴՈ - 1262

		24-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սահմանադրական դատարանի կողմից դրա **սահմանադրաիրավական բովանդակության** բացահայտման հիման վրա ներկայացված հետևյալ մեկնաբանությամբ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանել և կիրառել ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությամբ կիրառելի է վերջիններիս նկատմամբ։ **2.** Դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման։	24 սեպտեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1115
		26-րդ հոդվածի առաջին մաս	**1.** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **իրավական դիրքորոշումները**։	28 հունիսի 2013 թվականի ՍԴՈ - 1102
17.	**«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-76-Ն օրենք), … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **իրավական դիրքորոշումները**։	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224

18.	**«Դատական ծառայության մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 07.07.2006թ.)	14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ	**1.** «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**, նկատի ունենալով, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ նպաստելու դատավորի անկախությանը և գործունեության արդյունավետությանը, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	18 հոկտեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 996
19.	**«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 31.03.2004թ. ուժը կորցրած է ճանաչվել 18.05.2007թ.)**	1-ին հոդված (18 հոդվածի նոր խմբագրություն)	**1.** 2004 թվականի մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով (18 հոդվածի նոր խմբագրություն) նախատեսված դրույթը, համաձայն որի՝ կենսաթոշակի ամենամյա հավելավճարի որոշման համար հիմք է ընդունվում դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի, այլ ոչ թե աշխատավարձի, 75 տոկոսը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի պահանջներին ***հակասող և անվավեր***:	20 սեպտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 647
20.	**«Եկամտային հարկի մասին»ՀՀ օրենք (ընդունվել է 22.12.2010թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.01.2018թ.)**	6-րդ և 10-րդ հոդվածներ	**4.** … «Եկամտային հարկի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-246-Ն) 6-րդ և 10-րդ հոդվածները, … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
21.	**«Եկամտային հարկի մասին»ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Եկամտային հարկի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-71-Ն օրենք), … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրա-</u>**	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224

			<u>վական դիրքորոշումները</u>:	
22.	**«Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին»ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-70-Ն օրենք), … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
23.	**«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 13.12.2003թ.)**	5-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում</u>**: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, **տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար**: Այդ իրավապայմաններից առնվազն մեկի առկայությունը միայն իրավաչափ հիմք կարող է հանդիսանալ օրենքով սահմանված կարգով ու վեճի առարկա դրույ-	20 հոկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ - 1234

			թում նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտման համար։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի հիման վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ վեճի առարկա դրույթները դիմողների նկատմամբ կիրառվել են այլ մեկնաբանությամբ։	
24.	**«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27.10.1998թ. ուժը կորցրած է ճանաչվել 16.12.2017թ.)**	6 և 8-րդ հոդվածներ	**1.** «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։ **2.** «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրություն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 31 և 83.5-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***։	10 փետրվարի 2010 թվականի ՍԴՈ - 865
25.	**«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 03.07.2002թ.)**	16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերություն	**1.** «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը՝ **<u>սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	10 հունիսի 2014 թվականի ՍԴՈ - 1154

26.	**«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 15.11.2017թ.)**	61-րդ հոդվածի 16-րդ մաս	**1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը՝ զինծառայողի՝ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունը զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա ժամանակահատվածով սահմանափակելու մասով, ճանաչել Սահմանադրության 29, 60, 73-րդ և 82-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:	10 հուլիսի 2018 թվականի ՍԴՈ - 1424
27.	**«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 01.11.2018թ.)**	4-րդ հոդվածի 2-րդ մաս և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մաս	**1.** «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:	26 փետրվարի 2019 թվականի ՍԴՈ-1447
28.	**«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 26.12.2002թ. ուժը կորցրած է ճանաչվել 22.02.2005թ.)**	8-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** .... «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը **կարճել**՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 69 հոդվածի 1-ին և 7-րդ մասերի վրա:	4 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 747
29.	**«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք**	78-րդ հոդվածի 2-րդ մաս և	**1.** «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ	29 նոյեմբերի 2011 թվականի

	(ընդունվել է 03.04.2002թ. ուժը կորցրած է ճանաչվել 07.04.2018թ.)	3-րդ մասի 3-րդ պարբերություն	հոդվածի 4-րդ մասի պահանջներին ***հակասող և անվավեր***: **2.** «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը, **<u>սույն որոշման հիման վրա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի ուժը կորցնելու պայմաններում,</u>** համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	**ՍԴՈ - 1000**
30.	**«Կրթության մասին» ՀՀ օրենք** (ընդունվել է 14.04.1999թ.)	5-րդ հոդված, 15-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով …. գործի վարույթը կարճել: **2.** «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ….. դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	24 հունվարի 2014 թվականի ՍԴՈ - 1136
		6-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	12 հունիսի 2018 թվականի ՍԴՈ – 1419
31.	**«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 03.07.2002թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.07.2014թ. բացառություններով)**	31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետեր <u>ՀԱՓ</u> 31 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ և 4-րդ մաս	**1.** «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասին և 43 հոդվածին ***հակասող և անվավեր***: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասին և 43 հոդվածին ***հակասող և անվավեր*** ճանաչել «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի 31 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի այն դրույթը, համաձայն որի՝	22 դեկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 669

			«Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններում համամասնական ընտրակարգով ընտրություններին չի մասնակցել»։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Սահմանադրության 31 հոդվածին ***հակասող և անվավեր*** ճանաչել նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի 31 հոդվածի 4-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը»։	
32.	**«Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին»ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ. ՀՕ-75-Ն)**	1-ին հոդվածի 1-ին մաս	**4.** … «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին»ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**։	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
33.	**«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 22.12.2010թ.)** *«Կուտակային կենսաթոշակների մասին»ՀՀ օրենքում փոփո-*	5-րդ, 7-րդ, 8-րդ, 37-րդ, 38-րդ, 45-րդ, 49-րդ և 86-րդ հոդվածներ <u>ՀԱՓ</u>	**1.** «Կուտակային կենսաթոշակների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը	2 ապրիլի 2014 թվականի ՍԴՈ - 1142

	խություն կատարելու մասին»ՀՀ 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-67-Ն օրենքի 1-ին հոդվածով «Կուտակային կենսաթոշակների մասին»ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ	13-րդ հոդվածի 2-րդ մաս

		<u>ՀԱՓ</u> 41-րդ հոդվածի 4-րդ մաս <u>ՀԱՓ</u> 76-րդ հոդվածի 2-րդ մաս	համակարգին ներկայացվող պահանջները սահման-վում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապե-տության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին ***հակասող և անվավեր***։ **5.** Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթո-շակների մասին»Հայաստանի Հանրապետության օրեն-քի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքի արգելանքի միջո-ցով վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքը սահմանափակող դրույթը՝ գույքի տնօրին-ման, տիրապետման կամ օգտագործման սահմանա-փակման միջոցով, ճանաչել Հայաստանի Հանրապե-տության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մա-սի, 31 և 43-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***՝ հաշվի առնելով նաև, որ տվյալ դրույթին առնչվող իրավահարաբերությունները չեն վերաբերում քննության առարկա օրենքի իմաստով պարտադիր կուտակային վճար կատարողի /հարկային գործակալի/ անմիջական հարկային պարտավորությունների կա-տարմանը։ **6.** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաս-տանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդ-վածի 2-րդ մասի և 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշ-ման մեջ **<u>սահմանադրական դատարանի արտահայ-տած իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, հա-մաձայն որի՝ դրանցով նախատեսված իրավակարգա-	

			վորումները **չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:** **7.** Հաշվի առնելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-5 կետերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության շուրջ 50 օրենքներով և ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոնց շատ դրույթներ սույն որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի պահանջը՝ համակարգային առումով իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի սեպտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջա-	

			նակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին։ Սույն որոշման պահանջներից բխող նոր իրավակարգավորումներից ելնելով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ վերահաշվարկման են ենթակա մինչ այդ կատարված կուտակային վճարները։	
34.	**«Կուտակային կենսաթոշակների մասին»ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)** *«Կուտակային կենսաթոշակների մասին»ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»ՀՀ 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-67-Ն օրենքի 1-ին հոդվածով* ***«Կուտակային կենսաթոշակների մասին»****ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ*	Ամբողջությամբ	**1.** «Կուտակային կենսաթոշակների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի՝ սույն գործով վեճի առարկա 2-րդ հոդվածի 1-ին մասի 28, 36 և 37-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ մասը, 9-րդ հոդվածի 10-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ և 13-րդ մասերը, 37-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասի՝ «օրենքի 43-րդ հոդվածով» դրույթը, 39-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «որոնց կազմը և առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը» դրույթը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «ողջամիտ եկամտաբերություն» եզրույթը, 43-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ողջամիտ շահութաբերություն» եզրույթը, 44-րդ հոդվածի 2-րդ մասը, 46-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 62-րդ հոդվածի 5-րդ մասը, 62-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունը, 63-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, 67-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին մասը, 81-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 81-րդ հոդվածի 5-րդ մասը, 81-րդ հոդվածի 7-րդ մասը, 81-րդ	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ - 1224

			հոդվածի 13-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**: **2.** «Կուտակային կենսաթոշակների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին ***հակասող և անվավեր***: **3.** «Կուտակային կենսաթոշակների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ այն մասով, որով տարեկան գնաճով ճշգրտված չափով վերադարձնելու երաշխիքը չի տարածվում նաև տվյալ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների վրա, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ և 48-րդ /կետ 12/ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	
35.	**«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ որոշում (ընդունվել է 19.06.2009թ.)**	8-րդ կետի 2-րդ ենթակետ	**1.** «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	19 հոկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 921
36.	**ՀՀ աշխատանքային օրենսգիրք (ընդունվել է 09.11.2004թ.)**	14-րդ հոդված	**1.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	18 հուլիսի 2012 թվականի ՍԴՈ -1038

			2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի, 298-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի համաձայն՝ քաղաքացի Գալուստ Շիրինյանի գործով ընդունված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման։	
		73-րդ հոդված և 75-րդ հոդվածի 3-րդ մաս <u>ՀԱՓ</u>	**1.** ՀՀ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին և 43 հոդվածին ***հակասող և անվավեր*** ճանաչել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածում և 75 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթները՝ այնքանով, որքանով գործադուլի իրավունքը պայմանավորում են միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքով և արգելափակում են գործադուլի իրավունքը նոր հանգամանքներում՝ նաև «...այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»։	7 փետրվարի 2007 թվականի ՍԴՈ - 677

		60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթ	**2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին և 43 հոդվածին ***հակասող և անվավեր*** ճանաչել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթը:	
		113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ և 113-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի երրորդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	1 հունիսի 2010 թվականի ՍԴՈ - 891
		109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ և 105-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն **<u>այնպիսի մեկնաբանությամբ</u>**, համաձայն որի՝ աշխատանքի էական պայմանները փոփոխվելու հիմքով աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել, երբ սահմանված կարգով տեղի է ունեցել աշխատանքի մեկ կամ մի քանի էական պայմանի փոփոխում՝ գործատուի կողմից համապատասխան ակտ կայացնելու միջոցով, որում հիմնավորվում է այդ պայմանների փոփոխության անհրաժեշտությունը՝ կապված գործատուի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխ-	19 մարտի 2019 թվականի ՍԴՈ-1449

			նոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հետ: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:	
		113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ և 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետ	**1.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ այնքանով, որքանով չի երաշխավորում հավասար և ոչ խտրական իրավապայմանագրային հարաբերություններ աշխատողի և գործատուի միջև, ճանաչել ՀՀ Սահմանադրության 14.1. և 32 հոդվածներին ***հակասող և անվավեր***: **2.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառակապակցության մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 14.1. և 32 հոդվածներին ***հակասող և անվավեր***:	24 փետրվարի 2009 թվականի ՍԴՈ - 792
		113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ և 114-րդ հոդվածի 4-րդ	**1.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած **<u>իրավական դիրքորոշումները</u>**, համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	11 հոկտեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 991

		մասի 5-րդ կետ		
		221-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	**1.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը՝ «...ինչպես նաև կամայականություն դրսևորելը» բառակապակցության մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 1, 3, 14.1-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	15 հունիսի 2010 թվականի ՍԴՈ - 896
		265-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասը՝ առաջին նախադասության «կամ այլ» բառակապակցության մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի և 32-րդ հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***:	7 հուլիսի 2010 թվականի ՍԴՈ - 902
37.	**«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-73-Ն օրենք), … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները:</u>**	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
38.	**ՀՀ դատական օրենսգիրք (ընդունվել է 21.02.2007թ.)**	13-րդ հոդվածի 6-րդ կետ	**6**. ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	8 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 765
		14-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում, ճանաչել ՀՀ	2 դեկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 782

		<u>ՀԱՓ</u> 14 հոդվածի 5-րդ մաս	Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի, 18 հոդվածի 1-ին մասի, 55 հոդվածի 11-րդ մասի և 95 հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***։ **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրությանը ***հակասող և անվավեր*** ճանաչել նաև ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 5-րդ մասը։ **3.** Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ դատական համակարգի հետագա բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների շրջանակներում նաև վեճի առարկա հիմնահարցերի վերաբերյալ նախապատրաստվում են օրենսդրական բարեփոխումներ, հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց, սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 1-ը։	
		14-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	23 դեկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ – 786
		91-րդ հոդված	**1.** «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպություն-	7 մայիսի 2013 թվականի ՍԴՈ - 1092

			ների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ .... ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի ..... մասով կարճել:	
		91-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** ... ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	28 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 918
		94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ և 3-րդ մաս	**1.** ... ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ, և 3-րդ մասով .... գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 69 հոդվածի 1-ին և 7-րդ մասերի վրա:	4 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 747
		111-րդ հոդվածի 6-րդ մաս, 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետ և 158-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված **<u>սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում</u>**, համաձայն որի՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ	18 դեկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1063

			մասի հիմքերով դիմող Գ. Գյոզալյանի գործով վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման։ **4.** ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	
		115.2-րդ հոդվածի 10-րդ մաս, 117-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասը՝ այն մասով, որով դատավորների թեկնածուների ցուցակ ընդգրկված հավակնորդների հոգեբանական թեստի արդյունքները, որոնք վերաբերում են նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, ենթակա չեն հրապարակման, և այդ ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա է ոչնչացման, ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասին, մասնավորապես՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունն ամրագրող դրույթին, ***հակասող և անվավեր***։ **2.** ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասը չի արգելափակում երրորդ անձանց իրավունքը «Տեղեկատվության ազատության մասին»ՀՀ օրենքով սահմանված կարգով ստանալու ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված զեկույցը։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին»ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր	20 հունիսի 2017 թվականի ՍԴՈ-1374

			հանգամանքի հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման:	
39.	**«ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 22.02.2007թ.)**	2.1-րդ հոդված	**1.** «ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դիմումի հիման վրա՝ «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	7 հուլիսի 2009 թվականի ՍԴՈ - 811
40.	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունվել է 07.02.2018թ.)**	142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետ և 155-րդ հոդվածի 7-րդ մաս	**1.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***: **2.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	15 նոյեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1488
41.	**ՀՀ ընտանեկան օրենսգիրք (ընդունվել է 09.11.2004թ.)**	53-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	5 հոկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 919
		74 և 105-րդ հոդվածներ	**1.** «Քաղաքացի Գոհար Բոտոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74 և 105-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	25 դեկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1064

42.	**ՀՀ ընտրական օրենսգիրք (ընդունվել է 05.02.1999թ. ուժը կորցրած է ճանաչվել 26.06.2011թ.)**	2-րդ հոդվածի 1-ին կետ և 122-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր	**1.** ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի դրույթը՝ այն իմաստով, որ պետության կառավարմանը (ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին, համապետական հանրաքվեներին) մասնակցելու իրավունքը վերապահում է միայն ՀՀ տասնութ տարին լրացած քաղաքացիներին, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **3.** Հայաստանում օրինական կարգով մշտական բնակություն հաստատած փախստականների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը մասնակցելու իրավունքը բացառող՝ ... ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի, 122 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ... դրույթները ***չեն համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 2, 4, 8, 27, 105 հոդվածների պահանջներին:	16 հոկտեմբերի 1999 թվականի ՍԴՈ - 179
		10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերություն	**1.** ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	8 մայիսի 2009 թվականի ՍԴՈ - 803
		14-րդ հոդվածի 3-րդ կետ	**1.** Ազգային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ ՀՀ ընտրական օրենսգրքի (Ազգային ժողովի կողմից 2002թ. հուլիսի 3-ին ընդունված՝ «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի խմբագրությամբ) 14-րդ հոդվածի 3-րդ կետի «այդ թվում՝ դատարանի վճռով» արտահայտությունն այնքանով, որքանով սահմանափակում է խախտված իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը, ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 38 հոդվածի 2-րդ -	1 հոկտեմբերի 2002 թվականի ՍԴՈ - 389

			մասին, դրանով իսկ անհամապատասխանություն առաջացնելով նաև ՀՀ Սահմանադրության 1,2,3,4 և 27-րդ հոդվածների հետ և Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավաբանական ուժ չունի:	
		35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երկրորդ նախադասություն, 4-րդ ենթակետ, 36-րդ հոդվածի 1-ին կետ <u>ՀԱՓ</u> 35 հոդվածի 2-րդ կետ և 38 հոդվածի 3.1. կետի 1-ին և 2-րդ ենթակետեր	**1.** ՀՀ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի և 36 հոդվածի 1-ին կետի դրույթները՝ այն մասով, որով նախատեսվում է կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմում նշանակել դատավորների, ճանաչել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին և 98 հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***։ **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիման վրա ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին և 98 հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր*** ճանաչել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ կետի և 38 հոդվածի 3.1. կետի 1-ին և 2-րդ ենթակետերի այն դրույթները, որոնցով նախատեսվում է կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների թափուր տեղերը լրացնել դատավորների թվից։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից։	7 նոյեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 664
		40.1-րդ հոդվածի	**1.** ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից»	21 դեկտեմբերի 2007 թվականի

		3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթ	դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	ՍԴՈ -722
43.	**ՀՀ ընտրական օրենսգիրք (ընդունվել է 26.05.2011թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.06.2016թ.)**	11-րդ հոդվածի 1-ին մաս, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ և 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	**1.** ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ օրենսգրքում ամրագրված և սույն որոշման մեջ ներկայացված **սահմանադրաիրավական այն բովանդակությամբ**, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ կետի, համառոտ ձևով ենթադրում է, որ այդ դրույթները չեն կարող մեկնաբանվել որպես ընտրական իրավունքի սահմանափակում ու գործնականում արգելափակել ընտրախախտումների բացահայտման առնչությամբ ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում ընտրական գործընթացը սահմանված կարգով վերահսկող իրավասուբյեկտների համար ընտրողների ստորագրած ցուցակների մատչելիությունը՝ որպես ընտրական իրավունքի պաշտպանության, այդ թվում՝ դատական կարգով, անհրաժեշտ երաշխիք:	5 մայիսի 2012 թվականի ՍԴՈ - 1027
		18-րդ հոդվածի 5-րդ մաս և 26-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Քաղաքացի Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի և 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	16 հուլիսի 2013 թվականի ՍԴՈ-1105
		23-րդ հոդվածի	**1.** ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը,	5 մարտի

		3-րդ մաս, 24-րդ հոդված, 38-րդ հոդվածի 7-րդ մաս, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետ, 80-րդ հոդված	24-րդ հոդվածը, 38-րդ հոդվածի 7-րդ մասը, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և 80-րդ հոդվածը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	2013 թվականի ՍԴՈ - 1076
44.	**ՀՀ ընտրական օրենսգիրք (ընդունվել է 25.05.2016թ.)**	31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-րդ և 2-րդ պարբերություն ներ	**1**. ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։ **2**. ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ պարբերության երկրորդ նախադասության մեջ ամրագրված «միայն մեկ զանգվածային լրատվության միջոց և այդ զանգվածային լրատվության միջոցի ոչ ավելի, քան 50 ներկայացուցիչների» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ հոդվածների և 81-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին ***հակասող և անվավեր***։	26 դեկտեմբերի 2017 թվականի ՍԴՈ-1396
		141-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	7 մարտի 2017 թվականի ՍԴՈ-1356
45.	**ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշում**	հաստատված կանոնադրու- թյան 19-րդ կետ	**3.** «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապե-	4 ապրիլի 2017 թվականի ՍԴՈ-1360

			տությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի 1-ին պարբերության՝ «Կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին, անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը», 2-րդ պարբերության՝ «Կասկածյալների և մեղադրյալների անձնագրերը տերերին են վերադարձվում խափանման միջոցի վերացման դեպքում» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։ **4.** «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետի 3-րդ պարբերությունը (ՀՀ կառավարության՝ 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշման խմբագրությամբ) համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում</u>**, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին։	
46.	**ՀՀ կառավարության 2002**	Ամբողջությամբ	**3.** ՀՀ կառավարության 1 օգոստոսի 2002թ. թիվ 1151-Ն	18 ապրիլի

	թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշում (ուժը կորցրած է ճանաչվել 01.10.2006թ.)		որոշումը՝ «Երևանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», հիմքում ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 և ՀՀ հողային օրենսգրքի 104 հոդվածների դրույթները, հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների ենթաօրենսդրական կարգավորման առումով ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 3, 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43, 83.5. (1-ին և 2-րդ կետեր), 85 (2-րդ մաս) հոդվածների պահանջներին։ **4.** Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՀՀ Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել և օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը։	2006 թվականի ՍԴՈ - 630
47.	**ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշում** (ուժը կորցրած է ճանաչվել	Ամբողջությամբ	**2.** ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին (2-րդ մաս), 85-րդ հոդվածին (2-րդ մաս), 43-րդ հոդվածին (2-րդ մաս) ***հակասող*** ճանաչել ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը՝ «Հայրե-	3 հունիսի 2011 թվականի ՍԴՈ - 966

	09.06.2011թ.)		նական մեծ պատերազմի մասնակիցների և հաշման-դամների, այլ պետությունների տարածքներում մար-տական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված և ՀՀ համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու և այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պատճառա-բանական մասի 6-րդ և 7-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները և ի գիտություն ընդունե-լով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշումը:	
48.	**ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշում**	որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետ	**5.** «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համա-կարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համա-կարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշման 1-ին հա-վելվածի 5-րդ կետի «թ» ենթակետը համապատասխա-նում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ բա-ցահայտված **սահմանադրաիրավական այնպիսի բո-վանդակությամբ**, համաձայն որի՝«խախտման միջոցի կիրառման մասին տեղեկությունները՝կիրառման պա-հին» ՍԷԿՏ համակարգում տեղադրելու պարտականու-թյունը պետք է համահունչ լինի «խափանման միջոցի վերացման մասին տեղեկությունները՝ խափանման միջոցի վերացման պահին» ՍԷԿՏ համակարգ ուղար-կելու պարտականության հետ:	4 ապրիլի 2017 թվականի ՍԴՈ-1360

49.	**ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշում**	որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասություն	**3.** ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունն այնքանով, որքանով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման փաստի ուժով ինքնին սահմանափակում է կալանավորված անձի կամ դատապարտյալի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքները, ճանաչել Սահմանադրության 31, 33 և 78-րդ հոդվածներին ***հակասող***: **4.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի պահանջները, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված դրույթները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի հետևանքներ, որոնք կխաթարեն այդ դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 5-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին և Կառավարությանը այդ դրույթները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	5 փետրվարի 2019 թվականի ՍԴՈ-1442
50.	**ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշում**	Ամբողջությամբ	**1.** Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի	22 փետրվարի 2013 թվականի ՍԴՈ - 1075

			առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավա-կան դիրքորոշումները</u>**:	
51.	**ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշում**	Ամբողջությամբ	**1.** …. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման մասով գործի վարույթը **կարճել**:	24 հունվարի 2014 թվականի ՍԴՈ - 1136
52.	**ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշում**	որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերություն	**1.** ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը ճանաչել Սահմանա-դրության 29-րդ հոդվածին, 35 և 37-րդ հոդվածների 2-րդ մասերին ***հակասող և անվավեր***:	15 հունվարի 2019 թվականի ՍԴՈ - 1438
53.	**ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշում**	N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ և 15-րդ կետի 2-րդ ենթակետեր **<u>ՀԱՓ</u>** N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետ	3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետը ճանաչել Սահմանադրու-թյան 60-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերին ***հակասող***: 4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի հետ համակարգային առու-մով փոխկապակցված 1-ին ենթակետը ճանաչել Սահ-մանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերին ***հակասող***: 5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ	27 նոյեմբերի 2018 թվականի ՍԴՈ-1436

			հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերին ***հակասող***։ **6.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի պահանջները, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված վիճարկվող դրույթների Սահմանադրությանը հակասող ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի խոչընդոտներ շահութահարկի հարկման օբյեկտի որոշման համար, ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ, ինչպես նաև վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված 1-ին և 15-րդ կետի 2-րդ ենթակետերը Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի մայիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին։	

54.	**Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք (ընդունվել է 04.10.2016թ.)**	109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» և 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետեր	**1.** Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» ենթակետը համապատասխանում է Սահմանադրությանը։ **2.** Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը համապատասխանում է Սահմանադրությանը։	27 նոյեմբերի 2018 թվականի ՍԴՈ-1436
55.	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2018թ.)**	44-րդ հոդված	1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի հունիսի 26-ի ՀՕ-338-Ն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը՝ «այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից» բառակապակցության Օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ ծագած իրավահարաբերությունների վրա տարածելու մասով, ճանաչել Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***։	14 դեկտեմբերի 2018 թվականի ՍԴՈ - 1437
56.	**ՀՀ հողային օրենսգիրք (ընդունվել է 02.05.2001թ.)**	68-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «մասնակցել» և 7-րդ մասի՝ «Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» դրույթներ	**1.** ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության՝ «Աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը» դրույթն այն մասով, որով իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ արգելափակում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի աճուրդներին սահմանված կարգով ներկա գտնվելու և աճուրդի ընթացքը դիտարկելու նման ցանկություն հայտնած անձանց, այդ թվում՝ իրենց կանոնադրական պարտականությունը կատարող կազմակերպությունների ու զանգվածային լրատ-	30 հունվարի 2018 թվականի ՍԴՈ - 1399

			վության միջոցների ներկայացուցիչներին, ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածնե-րին ***հակասող և անվավեր***: **2.** ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությամբ ամրագրված՝ «Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորո-շումների շրջանակներում</u>**:	
		75-րդ հոդված	**1.** «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վար-չական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբեր-յալ» գործի վարույթը մասամբ՝.....ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ ենթակետերի, 1-ին մասի երկրորդ պարբերության, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի մասով **կարճել**: **2.** ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը համապատասխանում է ՀՀ Սահմանա-դրությանը:	7 մայիսի 2013 թվականի ՍԴՈ - 1092
		76-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առա-ջին պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահ-մանադրությանը:	18 մարտի 2008 թվականի ՍԴՈ - 741
		100-րդ հոդվա-	**1.** ... ՀՀ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-	10 հոկտեմբերի

		ծի 1-ին մասի 1-ին կետ	ին կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	2006 թվականի ՍԴՈ - 650
		102-րդ հոդվածի 5-րդ կետ	**1.** ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետը ճանաչել Սահմանադրության 60-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր:***	30 հոկտեմբերի 2018 թվականի ՍԴՈ - 1432
		104, 106 և 108-րդ հոդվածներ	**2.** ՀՀ հողային օրենսգրքի՝ ա) 104 հոդվածը՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին, բ) 106 հոդվածը ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 31 (3-րդ մաս), 43 և 83.5. (1-ին և 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին, գ) 108 հոդվածը ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 3, 31 (3-րդ մաս) և 43 հոդվածների պահանջներին: **4.** Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՀՀ Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել և օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնա-	18 ապրիլի 2006 թվականի ՍԴՈ - 630

			կան ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:	
57.	**ՀՀ մաքսային օրենսգիրք (ընդունվել է 06.07.2000թ.)**	95-րդ հոդվածի 1-ին մաս և 96-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի և 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի մասով կարճել: **2.** ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	2 դեկտեմբերի 2014 թվականի ՍԴՈ-1176
		203-րդ հոդված	**1.** ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	12 հոկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 920
		224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթ	**1.** ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:	3 հունիսի 2014 թվականի ՍԴՈ - 1153
58.	**«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»**	1-ին հոդվածի 6-րդ մաս	**1.** ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մա-	27 հոկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 836

	ՀՀ օրենք (ընդունվել է 17.05.2000թ.)		սի, ... իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանմամբ, մասով, կարճել:	
59.	**ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 28.11.2007թ. ուժը կորցրած է ճանաչվել 07.01.2014թ.)**	3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	7 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 906
		8-րդ հոդվածի 1-ին մաս <u>ՀԱՓ</u> 3-րդ գլուխ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	3 փետրվարի 2009 թվականի ՍԴՈ - 787
		68-րդ հոդվածի 3-րդ մաս <u>ՀԱՓ</u> 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**՝ հաշվի առնելով նաև վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության հնարավորությունը: **2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն այն մասով, որը վարչական ակտի հետ մեկտեղ չի ներառում վարչական մարմնի գործողությունը և անգործու-	22 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 942

			թյունը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***։	
		73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	**1.** «Քաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել։	30 նոյեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 927
		73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետեր	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***։ **2.** «Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի մասով՝ կարճել։ **3.** Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետևանքների, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաև նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և գործին մասնակցող այլ ան-	10 դեկտեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1127

			ձանց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված **պատշաճ կարգով ուղարկելու** պահանջի և գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու իրավական համարժեք երաշխիքների հստակ և համակարգված օրենսդրական կանոնակարգում, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի հուլիսի 1-ը։	
		79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ **սահմանադրաիրավական այն բովանդակությամբ,** համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այն չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայեցողություն։	17 ապրիլի 2012 թվականի ՍԴՈ - 1022
		113-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	5 փետրվարի 2013 թվականի ՍԴՈ - 1074
		115-րդ հոդված և 118-րդ հոդվածի 1-ին մաս	**4.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը և 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին ***հակասող և անվավեր***։	25 նոյեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 780

			5. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձևով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին։	
		118 և 118.6-րդ հոդվածներ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>** համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։ **2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «առկա է» և «հանգեցրել է» բառակապակցությունները՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված մեկնաբանության շրջանակներում ճանաչել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) ***հակասող և անվավեր***։ **3.** Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի	13 ապրիլի 2010 թվականի ՍԴՈ - 873

			մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի գործունակության և արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումը կամ հիմնախնդրին համակարգային այլ լուծումներ տալը պահանջում են օրենսդրական համարժեք կարգավորումներ, սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2010թ. դեկտեմբերի 1-ը:	
		118.7-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի ..... մասով **կարճել**:	7 մայիսի 2013 թվականի ՍԴՈ - 1092
		138-րդ հոդված	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	11 ապրիլի 2012 թվականի ՍԴՈ - 1020
		139-րդ հոդվածի 2-րդ մաս և 140-րդ հոդվածի 1-3 մասեր	**1.** «Քաղաքացի Մագդա Եղիազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.) 139-րդ հոդվածի 2-րդ մասի և 140-րդ հոդվածի 1-3 մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	3 հուլիսի 2014 թվականի ՍԴՈ - 1157

		141-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասն այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:	8 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 936
		151 և 152-րդ հոդվածներ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	5 փետրվարի 2010 թվականի ՍԴՈ - 864
60.	**ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 05.12.2013թ.)**	3-րդ հոդվածի 2-րդ մաս և 223-րդ հոդվածի 3-րդ մաս	**1. …** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը և 223-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	26 մայիսի 2015 թվականի ՍԴՈ - 1210
		8-րդ և 18-րդ հոդվածներ	**1.** Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** Վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է **<u>Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ</u>**, համաձայն որի՝ գործի նյութերում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների առկայության դեպքում	29 հոկտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1486

			այդ նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններն ստանալու, գործի նյութերից քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելու կողմերի իրավունքը ենթակա է իրականացման Օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով՝ ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացնելով օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:	
		60-րդ հոդվածի 1-ին մաս	1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ</u>**, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներին համապատասխան՝ սույն գործով դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով: **4.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասի համա-	10 հուլիսի 2018 թվականի ՍԴՈ-1423

			ձայն՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով իրենց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման վերոհիշյալ իրավունքը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում սույն գործով դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան։	
		69-րդ հոդվածի 3-րդ մաս	1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետն այնքանով, որքանով հնարավորություն չի տալիս անձին օրենքով սահմանված ոչ գույքային վնասի հատուցում պահանջելու մտադրություն ունենալու հիմքով ճանաչման հայց ներկայացնել, ճանաչել Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***։	17 դեկտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1497
		76-րդ հոդվածի 6-րդ մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	10 մարտի 2016 թվականի ՍԴՈ - 1257
		87-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը՝ «մինչև գործով դատաքննություն նշանակելը» դրույթի մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների առաջին մասերին ***հակասող***։ **2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա	23 հունիսի 2016 թվականի ՍԴՈ – 1289

			սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի դեկտեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, ՀՀ վարչական դատարավության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա վեճի առարկա հոդվածի կիրառմամբ դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով։	
		95-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Բերմա» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**։	19 հունվարի 2016 թվականի ՍԴՈ-1251
		96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը։	2 հոկտեմբերի 2018 թվականի ՍԴՈ-1427
		124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	**1.** «Լյուբով Փիլոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»	1 դեկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ-1238

			գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ... մասով **կարճել**:	
		131-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման վերաբերյալ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	10 փետրվարի 2015 թվականի ՍԴՈ - 1190
		132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը…» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062 և ՍԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի: **2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփո-	26 ապրիլի 2016 թվականի ՍԴՈ - 1268

			խություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին ***հակասող և անվավեր*** այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի։ **3.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1249 և ՍԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը։	
		154-րդ հոդվածի 4-րդ մաս և 158-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից,	3 մարտի 2015 թվականի ՍԴՈ - 1192

			չապահովելով նաև անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը։ **2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում։</u>**	
		156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասեր, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը... » դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն **<u>այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 և ՍԴՈ-1062 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի</u>**։ **2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին ***հակասող և անվավեր*** այն մասով, որով բողոք ներկայացնելու իրա-	9 փետրվարի 2016 թվականի ՍԴՈ-1254

			վունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի։ **3.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն **<u>այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1249 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը</u>**։ **4.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից ելնելով՝ դիմող Վարտգեզ Գասպարիի գործով ընդունված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով։	
		158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝«կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ **<u>սույն որոշման մեջ արտահայտված իրա-</u>**	22 նոյեմբերի 2016 թվականի ՍԴՈ - 1322

			<u>վական դիրքորոշումների շրջանակներում</u>, համաձայն որի բողոքարկվող դատական ակտի և նույնաբնույթ փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը կամ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումն ինքնին հանդես է գալիս որպես հիմնավորում առ այն, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Դիմումը քննության ընդունելու փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող մերժվել՝ արգելափակելով դատարանի մատչելիությունը: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ վեճի առարկա դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի առաջին կետում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:	
		160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված վճռաբեկ դատարանի որոշում:	25 մայիսի 2017 թվականի ՍԴՈ - 1370

			2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի առաջին կետում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:	
		176-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր*** այն մասով, որով չի ապահովվում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորություն: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի հիման վրա դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:	18 հոկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ - 1315
		181-րդ հոդված	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածն այն առումով, որով արգելափակվում է ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականության վիճարկումը «նոր երևան եկած» իրավաչափ այլ հանգամանքների հիմքերով՝ հանգեցնելով անձի դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրա-	26 հունիսի 2015 թվականի ՍԴՈ - 1222

			վունքների սահմանափակման, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի երկրորդ մասին, 18-րդ և 19-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***։ **2.** Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելը կարող է առաջացնել իրավական բաց՝ խթարելով այդ նորմերի ուժը կորցնելու արդյունքում հաստատվելիք իրավական անվտանգությունը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասով, սույն որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժի կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ հաշվի առնելով նաև հիմնախնդրի առնչությամբ միջազգային իրավական պրակտիկան, վեճի առարկա վերոհիշյալ իրավակարգավորումը՝ համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին։	
		185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցություն	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով, համապատասպանում է ՀՀ Սահմանադրությանը՝սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**։	31 մայիսի 2016 թվականի ՍԴՈ - 1275
		193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	**1.** «Աշոտ Քոչարյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետու-	28 փետրվարի 2017 թվականի ՍԴՈ - 1354

			թյան Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի մասով, **կարճել**։ **2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այն **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ անկախ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) կիրառման վերաբերյալ անհատական իրավական ակտի կամ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառումը (կատարումը) ապահոված գործողության կամ անգործության առկայության կամ բացակայության փաստից, իրավաբանական կամ ֆիզիկական անձը վարչական դատարան կարող է դիմել օրենքով սահմանված՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի անվավերության հիմքի առկայության դեպքում՝ անվավերության հիմքն առաջանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման, հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները դիմողների նկատմամբ կիրառվել են այլ մեկնաբանությամբ։	
		196-րդ հոդված	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի «ինչպես նաև այդ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված	6 հոկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ - 1231

			վերաքննիչ բողոքները» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների և 92-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին ***հակասող և անվավեր***:	
		205-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասպանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	11 հոկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ - 1314
		213-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման շրջանակներում: Անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ պետք է ապահովվի ընտրությունների արդյունքների ամփոփման համար հիմք հանդիսացող իրավական ակտերի և փաստաթղթերի /այդ թվում՝ գրանցամատյանների/ առնչությամբ ծագող ընտրական վեճերի **կոլեգիալ կարգով քննությունը՝** օրենսդրորեն անհրաժեշտ ներդաշնակություն ապահովելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի և ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումների միջև:	19 դեկտեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1395
61.	**ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «ՀՀ բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի**	Ամբողջությամբ	**2.** Հայաստանի Հանրապետության վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մասով գործի վարույթը **կարճել**:	10 հունիսի 2014 թվականի ՍԴՈ - 1154

	սահմանման մասին» թիվ 604 որոշում			
62.	**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 17.06.1998թ. ուժը կորցրած է ճանաչվել 09.04.2018թ.)**	2, 27, 29 և 38-րդ հոդվածներ	**1.** «Համլետ Չատինյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2, 27, 29 և 38-րդ հոդվածների՝ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**։	5 մայիսի 2017 թվականի ՍԴՈ-1365
		2-րդ հոդվածի 1-ին մաս, 159-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի .... մասով գործի վարույթը **կարճել**՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 69 հոդվածի 1-ին և 7-րդ մասերի վրա։ **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	4 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 747
		21, 22 և 23-րդ հոդվածների՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 և 23-րդ հոդվածները՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով... համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում։</u>**	28 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 918
		24-րդ գլուխ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	8 մայիսի 2007 թվականի ՍԴՈ - 700

		26-րդ գլուխ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	28 նոյեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 719
		40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	5 ապրիլի 2016 թվականի ՍԴՈ-1263
		48-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	8 դեկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 845
		52-րդ հոդվածի 2-րդ մաս, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ, 231-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «դատարանի վճռով» եզրույթն այն մասով, որով չի ներառում «վեճը ենթակա չէ դատարանում քննության» հիմնավորմամբ գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռը, ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ բողոքարկվող դատական ակտի և նույնաբնույթ փաստական հանգամանքներ ունեցող գործով	27 դեկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ-1334

			վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը կամ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումն ինքնին հանդես է գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման փուլում նման վերլուծության բնույթի ըստ էության գնահատմամբ չի կարող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել: **3.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «…հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտման իրավական համարժեք հիմքը վկայակոչելը, վերաբերելի հանգամանքները և այդ իրավական հիմքը համադրելը՝ նպատակ ունենալով փաստելու այդ հիմքի առկայությունը, նյութական կամ դատավարական իրավունքի խախտման և գործի ելքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը ներկայացնելը (այն ներառում է նաև վերլուծություն առ այն, որ եթե չլիներ այդպիսի խախտում, ապա կկայացվեր այլ ելքով ակտ) ինքնին հանդես են գալիս որպես հիմնավորում առ այն, որ խախտվել է նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, և որ այդ խախտումն ազդել է այդ գործի վրա:	

			4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «…հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունը դիմողների նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:	
		70-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Գագիկ Բաղալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	14 նոյեմբերի 2017 թվականի ՍԴՈ – 1386
		74-րդ և 75-րդ հոդվածներ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	12 սեպտեմբերի 2017 թվականի ՍԴՈ – 1376
		77-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրու-	22 ապրիլի 2008 թվականի

			թյանը:	ՍԴՈ – 752
		92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	**1.** «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	29 մարտի 2011 թվականի ՍԴՈ - 946
		102-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	12 ապրիլի 2016 թվականի ՍԴՈ-1264
		108-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	2 նոյեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 922
		160-րդ հոդվածի 1-ին կետ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր:***	16 նոյեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 665
		171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասու-	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**: **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասու-	7 ապրիլի 2015 թվականի ՍԴՈ - 1197

		թյուն	թյամբ ամրագրված դրույթը՝ այնքանով, որքանով գործունակ ճանաչվող անձին հնարավորություն չի ընձեռում անձամբ իրացնել լսվելու իր իրավունքը և հանդես գալ որպես դատավարության մասնակից, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին և 19-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր:***	
		204.28-րդ հոդվածի 1-ին կետ	**1.** «Մելտեքս» ՍՊԸ-ի և քաղաքացիներ Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի և Ագնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ - հոդվածի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**: Արձանագրել, որ, նախ՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-758 որոշման 13-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշման և եզրափակիչ մասի 5-րդ կետի հիմքով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել նաև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի (ՀՕ-277-Ն) 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ինչպես ՀՕ-233-Ն, այնպես էլ դրան հաջորդող որևէ այլ օրենքով դեռևս ՀՀ Սահմանադրությանը չի համապատասխանեցվել, երկրորդ՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջների հիմքով սպառված չպետք է համարվի սույն գործի առարկայի	23 փետրվարի 2010 թվականի ՍԴՈ - 866

			շրջանակներում նոր հանգամանքներով իրավասու դատարան դիմելու շահագրգիռ անձանց իրավունքը:	
		204.32-րդ հոդվածի 1-ին կետ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	28 սեպտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1049
		204.33-րդ հոդվածի 1-ին մաս	**4.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված **<u>սահմանադրաիրավական բովանդակությունից</u>** տարբերվող մեկնաբանությամբ օրենքի նորմի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու հնարավորություն չի ընձեռնում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր:*** **5.** Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի աբարենպաստ հետևանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-	15 հուլիսի 2011 թվականի ՍԴՈ - 984

			դդ հոդվածի 1-ին մասի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:	
		204.33-րդ հոդվածի 1-ին կետ՝ «եզրափակիչ մասում» բառակապակցության մասով	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 204.33-րդ հոդվածի 1-ին կետը՝ «եզրափակիչ մասում» բառակապակցության մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:	15 մայիսի 2018 թվականի ՍԴՈ - 1417
		204.38-րդ հոդված	**2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը՝ **<u>սահմանադրաիրավական այն բովանդակությամբ,</u>** որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **3.** Իրավակիրառական պրակտիկայում .... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:	15 հուլիսի 2011 թվականի ՍԴՈ - 984
		204.38-րդ հոդվածի 2-րդ մաս	**2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այն **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ,</u>** համաձայն որի.	18 սեպտեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1114

			ա/ **նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի և/կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը**, բ/ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը **վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Իսկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը** հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:	
		207-րդ հոդվածի 1-ին մաս, 140-րդ հոդվածի 1-ին մաս, 213-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանդրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի մասով կարճել: **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1254 և ՍԴՈ-1268 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված	28 հունիսի 2016 թվականի ՍԴՈ-1290

			կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոքներ կայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի։ **3.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր*** այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն։ **4.** «Սահմանադրական դատարանի մասին»ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա վեճի առարկա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով։	
		208-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***՝ այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի	18 հուլիսի 2012 թվականի ՍԴՈ - 1037

			դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքները:	
		208-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	6 դեկտեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 1004
		213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր	**1.** «Արամ Շահբազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի մասով **կարճել**, քանի որ տվյալ նորմի առնչությամբ առկա է Սահմանադրական դատարանի որոշում: **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	7 փետրվարի 2017 թվականի ՍԴՈ-1344
		218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	28 նոյեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 668

		221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ <u>ՀԱՓ</u> 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «...կամ չպատճառաբանված է» և 6-րդ կետը՝ «...պատճառաբանված չէ» բառակապակցություններ	**2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը՝ «...կամ պատճառաբանված չէ» բառակապակցության մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով ՀՀ Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր*** ճանաչել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «...կամ չպատճառաբանված է» և 6-րդ կետը՝ «...պատճառաբանված չէ» բառակապակցությունների մասով։	15 հունիսի 2010 թվականի ՍԴՈ - 896
		221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ և 28-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «Ռոբերտ Մեղերդիչ-Ղարասսեմյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 28-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել։	23 մարտի 2010 թվականի ՍԴՈ - 870
		221.1-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221.1-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը։	3 ապրիլի 2018 թվականի ՍԴՈ-1411
		223-րդ հոդվածի 1-ին մասի	**1**. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233	8 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 765

		1-ին կետ, 231-րդ հոդվածի 2-րդ մաս, 233-րդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետեր, 2-րդ և 4-րդ մասեր <u>ՀԱՓ</u> 40 հոդվածի 2-րդ մաս	հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 233 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը **կարճել**, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՍԴՈ-754 որոշումը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իրավական որոշակիություն է ձեռք բերում միայն օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակցության մեջ։ **2**. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 2-րդ մասը, 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 231 հոդվածի 2-րդ մասը՝ հավատարմագրված փաստաբանի ինստիտուտին առնչվող մասով, 233 հոդվածի 2-րդ մասը՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***։ **5**. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**։ **7**. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգութ-	

			յունը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձևով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին։	
		223-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այն բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վճռաբեկ բողոք բերել իրավունք ունեցող անձանց ցանկը՝նույն օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասի առկայության պարագայում սպառիչ չէ և չի արգելափակում գործին մասնակից չդարձված անձանց՝վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքը, երբ այդ ակտերը վերաբերում են տվյալ անձանց իրավունքներին ու պարտականություններին։ **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի հիման վրա դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ։	4 հոկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ - 1310

		223-րդ հոդվածի 3-րդ մաս և 231-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***՝ նկատի ունենալով, որ առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջանում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաև անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը։ **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 4-րդ մասը՝ վճռաբեկ բողոքը ստորագրելու պահին փաստաբան չունեցող և օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած գործին մասնակցող անձանց մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը։ **3.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված՝ «Վճռաբեկ բողոքին կցվում են նաև … վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-	16 հունիսի 2015 թվականի ՍԴՈ - 1220

			թյանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1192 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումնե-րի շրջանակներում</u>**:	
		228-րդ հոդվա-ծի 2-րդ մաս	**1.** «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի երկրորդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	14 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 914
		230-րդ հոդվա-ծի 1-ին կետ, 231.1., 231.2-րդ հոդվածներ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթները (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: **3.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ). ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	9 ապրիլի 2007 թվականի ՍԴՈ - 690

			4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	
		230-րդ հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետ և 231.2-րդ հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետեր	**1.** «Քաղաքացի Ի. Եդիգարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության և ՀՀ - քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի, 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի, 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի մասով՝ **կարճել**:	11 մայիսի 2007 թվականի ՍԴՈ - 701
		231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝վճռաբեկ բողոքին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջի մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության /2015 թվականի փոփոխություններով/ 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, 78-րդ հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր:*** **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:	12 հուլիսի 2016 թվականի ՍԴՈ-1293
		231.1-րդ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի	27 մայիսի

		հոդվածի 4-րդ մաս (նոր խմբագրությամբ 233-րդ հոդվածի 4-րդ մաս) <u>ՀԱՓ</u> 224 հոդվածի 3-րդ մաս	231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը)՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***։ **2.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ նույն անձի կողմից նույն դատական ակտի դեմ մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք բերելու արգելքի մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 (1-ին մաս) հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***։	2008 թվականի ՍԴՈ - 754
		231.2-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետ	**1.** «Քաղաքացիներ Ա. Սաֆարյանի և Հ. Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի մասով՝ կարճել։	15 մայիսի 2007 թվականի ՍԴՈ - 702
		233-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնե-	**1.** «Գեղեցիկ քնար» արտադրական կոոպերատիվի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վե-	21 հուլիսի 2009 թվականի ՍԴՈ - 817

		լու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված» դրույթ	բաբերյալ» գործի վարույթը կարճել՝ դիմողին տրամադրելով սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշումը:	
		233-րդ հոդվածի 2-րդ մաս, 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի **սահմանադրաիրավական բովանդակությամբ**, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն վճռաբեկ բողոքի հետ կապված առկա բոլոր այն թերությունները, որոնք օրենքի համաձայն հիմք են վճռաբեկ բողոքը վերադարձնելու համար և որոնց շտկելուց հետո բողոքը կհամարվի սահմանված կարգով ներկայացված: **2**. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի **սահմանադրաիրավական բովանդակությամբ**, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված վճռաբեկ դատարանի որոշում: **3**. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ՝ ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը և 233.1-րդ հոդվածի 1-ին	18 ապրիլի 2017 թվականի ՍԴՈ - 1363

			մասի 5-րդ կետը՝ դիմող «ՄԼԼ Ինդասթրիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի առաջին և երկրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ, բ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դիմողներ Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ կետում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ։	
		233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող **<u>այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի</u>** ՍԴՈ-1249, ՍԴՈ-1254 և ՍԴՈ-1268 որոշումներում նույնաբնույթ հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը։	6 սեպտեմբերի 2016 թվականի ՍԴՈ-1296
		240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	**2**. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	22 սեպտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 832

		247.7-րդ հոդվածի 2-րդ կետ	**1.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247.7-րդ հոդվածի 2-րդ կետում … ամրագրված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	22 մարտի 2016 թվականի ՍԴՈ - 1262
63.	**«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 28.11.2007թ. ուժը կորցրած է ճանաչվել 09.04.2018թ.)**	80-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասեր <u>ՀԱՓ</u> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի 204.20 հոդվածի 2-րդ մաս և 204.26	**1.** «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել: **2.** «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **3.** «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 5-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 և 42 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***: **4.** «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի 204.20 հոդվածի 2-րդ մասը և 204.26 հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***: **5.** Վերոհիշյալ նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու արդյունքում օրենսդրական բացը բացառելու անհրաժեշտությունից ելնելով,	9 սեպտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 758

		հոդված, 72 և 76 հոդված-ներ	նկատի ունենալով սույն որոշման 10-րդ կետում **սահ-մանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը**, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մա-սով, ՀՀ Սահմանադրությանը ***հակասող և անվավեր*** ճանաչել նաև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատա-րելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի՝ սույն ո-րոշման 3-րդ և 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 72 և 76 հոդվածները:	
64.	**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 09.02.2018թ.)**	140-րդ հոդվածի 4-րդ մաս և 169-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	18 հունիսի 2019 թվականի ՍԴՈ-1464
		368-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «բողոքը գործին մասնակցող անձանց...ուղարկելու մասին ապացույցներ» բառակապակցություն և 371-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Կրկին	**1.** Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է **Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ**, համաձայն որի՝ ձևին և բովանդակությանը չհամապա-տասխանելու հիմքով վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցը, ինչպես նաև բողոքի պատճենը գործին մասնակցող անձանց և գործը քննող դատարան կրկին ուղարկելու անհրաժեշ-տությունը բացակայում է, եթե վերաքննիչ բողոքը փոփոխության չի ենթարկվել: **2.** Քաղաքացիական դատավարության օրենսգրքի	24 սեպտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1477

		ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները ….» դրույթ	371-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները….» դրույթի մասով համապատասխանում է **<u>Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ</u>**, համաձայն որի՝ կրկին ներկայացված բողոքում առկա խախտումները վերաբերում են դատարանի կողմից մատնանշված և չվերացված խախտումներին: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ և 371-րդ հոդվածի 5-րդ մասերը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի առաջին և երկրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:	
		401-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:	2 ապրիլի 2019 թվականի ՍԴՈ - 1452
65.	**ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 05.05.1998թ.)**	2-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	25 նոյեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 780
		10-րդ հոդվածի 2-րդ մաս, 302-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	4 մարտի 2011 թվականի ՍԴՈ - 944

			2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	
		17-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով ՀՀ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին ***հակասող և անվավեր***։ **2.** Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետևանքների, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաև նկատի ունենալով, որ պահանջվում է բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի համակարգված օրենսդրական կանոնակարգում, որը, մասնավորապես, կներառի «բարոյական վնաս» հասկացության, այդ ինստիտուտի կիրառման շրջանակների և հիմքերի, բարոյական վնասը հաշվելու հստակ կարգի և այլ հարցերի վերաբերյալ դրույթներ, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ	5 նոյեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1121

			քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014թ. հոկտեմբերի 1-ը:	
		187 և 280-րդ հոդվածներ	**1.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, 60 հոդվածի 1-ին կետի պահանջների հիման վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասով գործի քննությունը կարճել: **2.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **3.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	21 նոյեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 667
		198-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների **սահմանադրաիրավական այն բովանդակությամբ**՝ համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը: Այդ դեպքերն են. ա/ երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրա-	24 փետրվարի 2012 թվականի ՍԴՈ - 1009

			վունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով, բ/ երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:	
		199-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Քաղաքացիներ Էմմա Խոջոյանի և Գևորգ Արշակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	19 մայիսի 2015 թվականի ՍԴՈ - 1205
		210-րդ հոդվածի 1-ին մաս և 216-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը **կարճել**:	29 հունիսի 2010 թվականի ՍԴՈ - 901
		218-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 3, 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին: **4.** Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվա-	18 ապրիլի 2006 թվականի ՍԴՈ - 630

			ծի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՀՀ Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել և օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ զերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը։	
		249-րդ հոդված	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։ **2.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ **<u>տվյալ պարբերությունում «գրավատու» եզրույթի այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին։</u>**	19 հուլիսի 2016 թվականի ՍԴՈ - 1294

			3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ **տվյալ պարբերություններում «պարտապան» եզրույթի այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:** **4.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում» բառակապակցությունը՝ այն մասով, որով գրավատուին կարող է պարտադրվել գրավառուի հնարավոր վնասների չափից ավելի ապահովման տրամադրում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***: **5.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:	
		280-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի ..... դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	10 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 650
		300-րդ հոդվա-	**2.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի	15 մայիսի

		ծի 2-րդ կետ <u>ՀԱՓ</u> 289 հոդված	դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։ **3.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	2007 թվականի ՍԴՈ - 702
		313-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածում սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	3 հուլիսի 2007 թվականի ՍԴՈ -705
		339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	14 մարտի 2017 թվականի ՍԴՈ -1357
		340-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	19 ապրիլի 2016 թվականի ՍԴՈ -1265
		369-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	4 մայիսի 2018 թվականի ՍԴՈ -1412
		470-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին և 31 հոդվածի 2-րդ մասին։	26 սեպտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 648
		601-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	3 մայիսի 2016 թվականի ՍԴՈ -1270
		873-րդ	**2.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873-րդ հոդվածի	6 դեկտեմբերի

		հոդվածի 2-րդ մաս	2-րդ մասով գործի վարույթը կարճել:	2011 թվականի ՍԴՈ – 1004
		887-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	12 հունիսի 2018 թվականի ՍԴՈ - 1418
		1003.1-րդ հոդվածի 1-ին կետ (2007թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ)	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003.1-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «պարտականություն» հասկացության **սահմանադրաիրավական բովանդակությունը** ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության **սահմանադրաիրավական բովանդակությունը** ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ: Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:	14 հունիսի 2011 թվականի ՍԴՈ - 975
		1058-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Քաղաքացի Արա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	14 ապրիլի 2015 թվականի ՍԴՈ - 1202

		1087.1-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիր-քորոշումներից բխող սահմանադրաիրավական բովանդակության</u>** և ՀՀ ստանձնած միջազգային պար-տավորությունների շրջանակներում:	15 նոյեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 997
		1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիա-կան օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	23 ապրիլի 2019 թվականի ՍԴՈ-1455
		1202-րդ հոդված	**1.** «Ջուլետա Եսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քա-ղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի, ...՝ Հայաս-տանի Հանրապետության Սահմանադրությանը համա-պատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գոր-ծի վարույթը **կարճել:**	25 մայիսի 2017 թվականի ՍԴՈ - 1371
		1217-րդ հոդվա-ծ <u>ՀԱՓ</u> 72-րդ գլուխ	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլուխն այն մասով, որով բացառում է համամայր և համահայր քույ-րերի և եղբայրների՝ ժառանգատուի հետ իրենց ազգակ-ցական փոխկապակցվածության աստիճանին համար-ժեք ժառանգման իրավունքը, ճանաչել ՀՀ Սահմանա-դրության 1-ին, 3-րդ հոդվածներին և 14.1-րդ հոդվածի երկրորդ մասին ***հակասող և անվավեր***:	18 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 917
		1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր	**1.** «Էմմա Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քա-ղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանա-դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի՝ ՀՀ քաղա-քացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի մասով **կարճել:**	15 նոյեմբերի 2016 թվականի ՍԴՈ-1321

			2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այնպիսի **սահմանադրաիրավական բովանդակությամբ,** համաձայն որի՝ կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումը պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձի կողմից ինքնին բավարար հիմք է տվյալ անձի կողմից ժառանգության ընդունման փաստը դատական կարգով հաստատելու համար, և այդ փաստի հաստատման համար անհրաժեշտ չեն ժառանգությունն ընդունելուն միտված այլ ակտիվ գործողությունների կատարման և, մասնավորապես, նոտարին դիմում տալու վերաբերյալ ապացույցներ։ **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի հիման վրա դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ։	
		1230-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	21 հունիսի 2011 թվականի ՍԴՈ - 980
		1243-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը։	6 դեկտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1495

66.	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-69-Ն օրենք), … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
67.	**«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 06.11.1995թ.)**	1-ին հոդվածի 5-րդ մաս և 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն <u>ՀԱՓ</u> 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետեր	**1.** «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	15 մարտի 2011 թվականի ՍԴՈ - 945
68.	**«ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 30.11.2011թ.)**	8-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի՝«Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը» և «Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հա-	4 ապրիլի 2017 թվականի ՍԴՈ - 1360

			րուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում</u>**, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինը կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես կարող է վերցնել **բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշման առկայության պայմաններում**:	
69.	**ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 01.07.1998թ.)**	14-րդ հոդվածի 2-րդ մաս, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ և 279-րդ հոդված	**2**. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և 279-րդ հոդվածը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արձանագրված իրավակարգավորումների շրջանակներում</u>**: ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքների պաշտպանության առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 279-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում չի կարող «այլ հաղորդումների գաղտնիության բացահայտման» արտահայտության մեջ ընդգրկվել «տեղեկատվության աղբյուրի բացահայտումը», ինչն ունի այլ նյութաիրավական հիմք և ինքնուրույն իրավակարգավորման առարկա է: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի հիման	20 հոկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ - 1234

			վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ վեճի առարկա դրույթները դիմողների նկատմամբ կիրառվել են այլ մեկնաբանությամբ:	
		16-րդ հոդվածի 2-րդ մաս և 172-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը դռնփակ դատական նիստում անցկացնելու մասով, համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** Քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը դռնփակ դատական նիստում անցկացնելու մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:	2 հուլիսի 2019 թվականի ՍԴՈ-1467
		21-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում</u>**: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է հետևյալին. **առաջին՝** այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տվել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարություններ, գործի վարույթը կարճելու, քրեական	17 նոյեմբերի 2015 թվականի ՍԴՈ - 1236

			հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդումը չիրականացնելու մասին նոր որոշում հնարավոր է կայացնել միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարությունների պարտադիր կատարման պարագայում, **երկրորդ՝** մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը հսկողության նպատակով դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**, **երրորդ՝** մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում Սահմանադրությամբ և օրենքով ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է դիտարկել որպես **վեջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքի հետ:**	
		21-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել՝ հաշվի առնելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1236 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում մինչդատական վարույթում **գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու** մասին քրեական հետապնդման մարմնի (հետաքննության մարմնի կամ քննիչի) որոշումը ՀՀ գլխավոր դատախազի կող-	1 նոյեմբերի 2016 թվականի ՍԴՈ-1319

			մից կարող է վերացվել մեկ անգամ և միայն այդպիսի որոշման կայացումից հետո՝վեց ամսվա ժամկետում՝ անկախ քրեական հետապնդման մարմնի վերոհիշյալ որևէ որոշման առնչությամբ ստորադաս հսկող դատախազի դատավարական լիազորության իրականացումից: ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու սահմանադրաիրավական պարտականությունն է **հսկող դատախազի՝ օրենքով սահմանված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի (7-օրյա) ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում (6 ամիս) ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ կայացնելով վերջնական որոշում: Վեճի առարկա նորմը դատական պրակտիկայում շարունակում է կիրառվել այլ մեկնաբանությամբ, ինչը ենթակա է վերանայման:	
		21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր, 66-րդ հոդված, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածներ, 49-րդ գլխի նորմեր	**1.** «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածների, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի, «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերի, «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշե-	14 փետրվարի 2017 թվականի ՍԴՈ-1348

		<u>ՀԱՓ</u> 426.4-րդ հոդվածի 1-ին մաս	լու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.3-րդ հոդվածի, 49-րդ գլխի նորմերի ... մասով, կարճել։ **4.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ **արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով։**	
		35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**, մասնավորապես, հաշվի առնելով՝ ա) իրավակիրառ պրակտիկայում անմեղության կանխավարձակի սահմանադրական սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունը, բ) օրենսգրքի նշված դրույթով նախատեսված բացառության իրացման անհրաժեշտությունը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների անմիջական գործողության ապահովման ու իրավունքի գերակայության երաշխավորման հիման վրա, գ) անձի մահվան հիմքով քրեական հետապնդում	21 մարտի 2017 թվականի ՍԴՈ-1358

			չիրականացնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում մահացածի հարազատներին նման որոշման ընդունման մասին իրազեկելու անհրաժեշտությունը:	
		35-րդ հոդված և 135-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը՝ Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառութային անձեռնմխելիությունը՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թվում չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***: **2.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	4 սեպտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1476
		35-րդ հոդվածի 2-րդ մաս և 67-րդ հոդվածի 3-րդ մաս	**1**. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) և 21-րդ հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***: **2**. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	30 մարտի 2010 թվականի ՍԴՈ - 871
		41-րդ հոդված և «Դատական որոշումների	**1.** «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարու-	22 հունվարի 2019 թվականի ՍԴՈ-1439

		կատարումը» վերտառությամբ 49-րդ գլխում ընդգրկված նորմեր	մը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը, մասնակի՝ «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի մասով, **կարճել:** **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն **<u>այնպիսի մեկնաբանությամբ</u>**, համաձայն որի՝ հոդվածի 8-րդ կետում նշված «օրենքով նախատեսված դեպքերում այլ հարցեր լուծելը» դատարանի այն լիազորություններն են, որոնք քրեադատավարական օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված են որպես քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանի լիազորություններ:	
		53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետեր, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Հետաքննության մարմնի լիազորությունները» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «Հետաքննության մարմինը՝…հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից ելնելով այն իրավակիրառ պրակտիկայում չի կարող	2 փետրվարի 2016 թվականի ՍԴՈ - 1253

			մեկնաբանվել որպես «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» եզրույթների՝ «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա անհրաժեշտ պայմանների ամրագրում՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության իրավակարգավորումը:	
		55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետ	**2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	27 հոկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 836
		59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթ և 201-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	24 հունվարի 2012 թվականի ՍԴՈ - 1008
		59-րդ հոդվածի 4-րդ մաս, 77-րդ հոդված	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածը՝ վեճի առարկայի և սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	20 դեկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ - 1333

		60-րդ հոդվածի 1-ին մաս, 154-րդ հոդված, 158-րդ հոդվածի 2-րդ մաս, 159-րդ հոդված	**1.** «Լուսինե Ավետիսյանի, Անահիտ Կոշտոյանի, Անդրանիկ Պողոսյանի, Նարինե Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի, 158-րդ հոդվածի 2-րդ մասի, 159-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	19 մարտի 2018 թվականի ՍԴՈ - 1408
		69-րդ հոդվածի 5-րդ մաս, 70-րդ հոդվածի 1-ին մաս 2-րդ կետ և 72-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ նախադասության դրույթներ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասը, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 72-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ նախադասությունը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը **<u>սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	13 փետրվարի 2018 թվականի ՍԴՈ - 1403
		73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	**1**. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ - հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ դրանում ամրագրված՝ «***քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ***» և ***«եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը»*** ձևակերպումների մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին և 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին ***հակասող և անվավեր***:	8 հոկտեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1119
		86-րդ հոդվածի 3-րդ մասի	**2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի՝«Վկան պարտավոր	4 ապրիլի 2017 թվականի

		7-րդ կետ	է՝…չմեկնել այլ վայր՝ առանց դատարանի թույլատվության» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում</u>**, համաձայն որի՝ վկային այլ վայր մեկնելու թույլատվություն տալու՝ դատարանի լիազորությունը պետք է իրականացվի ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նպատակի շրջանակներում և ՀՀ Սահմանադրության 78 ու 79-րդ հոդվածներով սահմանված համաչափության և որոշակիության սկզբունքների պահպանմամբ, որով և կանխորոշվում են դատարանի հայեցողության սահմանները։	ՍԴՈ - 1360
		142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 143-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։ **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ մեղադրյալին կալանքից ազատելու մասին որոշման առկայության պայմաններում հանձնարարականը **չի կարող կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարի համար դատավարական հավելյալ նախապայման հանդիսանալ** մեղադրյալին կալանքից **ազատելու հարցում**։	21 նոյեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1387
		143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասեր	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով որ գրավի կիրառումը թույլատրելի է համարում միայն քրեական վարույթն իրակա-	15 հոկտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1480

			նացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով՝ բացառելով նույն Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված մյուս դեպքերը, ճանաչել Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***: **2.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը պետության եկամուտ դարձնելը հնարավոր է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու համար, ճանաչել Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***: **3.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասը, 137-րդ հոդվածի 4-րդ մասը և 139-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը սահմանում են որպես կալանավորման այլընտրանք՝ կալանավորումից կախյալ խափանման միջոց, ճանաչել Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին ***հակասող***: **4.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասը, 137-րդ հոդվածի 4-րդ մասը և 139-րդ հոդվածի 2-րդ	

			մասը՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա խափանման այլ միջոցները՝ որպես կալանավորման այլընտրանք, ինչպես նաև գրավը՝ որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված վերոնշյալ դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
		174-րդ հոդված, 262-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը ներկայացվում է համապատասխան բողոքի հետ միասին: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ **գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դա-**	30 մայիսի 2017 թվականի ՍԴՈ - 1372

		<u>ՀԱՓ</u> 262-րդ հոդվածի 2-րդ մաս	**տավարության մյուս մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:** **3.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի և 262-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը <u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ</u>, համաձայն որի՝ **գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողին կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցներին՝ գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը պարզաբանելու պարտականությունը կատարվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:**	
		197-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <u>իրավական դիրքորոշումների շրջանակնե-ում</u>:	28 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1225

		221-րդ հոդվա- ծի 7-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ - հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <u>**իրավական դիրքորոշումների շրջանակներում:**</u>	9 նոյեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 923
		263-րդ հոդվա- ծի 2-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում և սույն գործով դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***: **2.** Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը և հակասական իրավակարգավորման հաղթահարումը նաև օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաև նկատի ունենալով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի անմիջական անվավերությունն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ	21 դեկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 930

			սահմանել 2011թ. հունիսի 30-ը:	
		283-րդ հոդվածի 1-ին մաս, 288-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	2 սեպտեմբերի 2016 թվականի ՍԴՈ - 1295
		284-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին ***հակասող և անվավեր***:	23 նոյեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 926
		285-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերություն	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	12 սեպտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 827
		285-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u>**	13 հունիսի 2017 թվականի ՍԴՈ - 1373
		290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասեր	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնա-	7 դեկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 844

			կանում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***։ **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	
		290-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	18 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 652
		290-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «Քաղաքացի Լևոն Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել ։	15 ապրիլի 2014 թվականի ՍԴՈ - 1144
		293-րդ հոդվածի 1-ին մաս և 294-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները» դրույթը և 294-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**։	9 հունիսի 2015 թվականի ՍԴՈ - 1213

			2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ և 19-րդ հոդվածների պահաջներին ***հակասող և անվավեր:***	
		296-րդ հոդված	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ ա/ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը չի կարող մեկնաբանվել ավելի լայն, քան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270 և 271-րդ հոդվածներում նախատեսված պահանջներն են: Իսկ վերջիններս չեն կարող մեկնաբանվել այնպես, որ այդ մեկնաբանությունը ներառի ապացույցների գնահատումը կամ հնարավորություն տրվի դատարանին դրսևորելու այնպիսի վարքագիծ, որը դատարանը դատավարության տվյալ փուլում իրավասու չէ դրսևորել, բ/ գործը մեղադրողին մեկից ավելի անգամ վերադարձնելը չի բխում իրավունքի գերակայության սկզբունքից և անձի սահմանադրական իրավունքների խախտման իրական վտանգ կարող է ստեղծել: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմա-	5 դեկտեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1393

			նադրությանը **սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ**, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դատարանը գործը վերադարձրել է դատախազին, վերջինս մեղադրական եզրակացությունում առկա թերություններն օրենքի պահանջներին համապատասխան շտկելու նպատակով այն կարող է ուղարկել քննիչին՝ պահպանելով դատարանի կողմից սահմանված ժամկետները:	
		300-րդ հոդված	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:	26 հունիսի 2018 թվականի ՍԴՈ - 1421
		309-րդ հոդվածի 2-րդ մաս	**2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	4 նոյեմբերի 2014 թվականի ՍԴՈ - 1174
		309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթները սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված **իրավական դիրքորոշումների շրջանակներում** համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	2 ապրիլի 2010 թվականի ՍԴՈ - 872

		<u>ՀԱՓ</u> 309.1-րդ հոդվածի 5-րդ մաս	**2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) ***հակասող և անվավեր*** ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:	
		309.1-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը **կարճել**:	4 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 934
		311-րդ հոդվածի 2-րդ կետ, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետեր <u>ՀԱՓ</u> 311 հոդվածի 1-ին կետի, 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթնե-	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի վերաբերյալ Գ. Գզրարյանի դիմումի մասով գործի վարույթը **կարճել**: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) ***հակասող և անվավեր***: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) ***հակասող և անվավեր*** ճանաչել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները և 419 հոդվածի 2-րդ կետի լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:	24 հուլիսի 2007 թվականի ՍԴՈ - 710

		ր և 419 հոդվածի 2-րդ կետի լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթ		
		314.1-րդ հոդվածի 8-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 8-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	24 փետրվարի 2015 թվականի ՍԴՈ - 1191
		375-րդ հոդված և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ հոդվածի՝ «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են **ամբողջական ակտի՝ ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին՝ պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը**: **3.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն **<u>այնքանով, որքանով</u>** երաշխավորվում է **դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման**: **4.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի	8 դեկտեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1394

			69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողի վերաքննիչ բողոքի ընդունելության վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտը օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքների հիմքով ենթակա է վերանայման, քանի որ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:	
		375-րդ հոդվածի «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ դրույթ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ» համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	18 սեպտեմբերի 2018 թվականի ՍԴՈ - 1426
		375.1-րդ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ	28 դեկտեմբերի

		հոդվածի 1-ին մաս	հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ...», ինչպես նաև «Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	2010 թվականի ՍԴՈ - 931
		376.1 -րդ և 478.2-րդ հոդվածներ	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	19 փետրվարի 2019 թվականի ՍԴՈ-1446
		376.1-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «Ռոբին-Օֆիկ Օսկանյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	16 փետրվարի 2016 թվականի ՍԴՈ-1255
		376.1-ին հոդվածի 4-րդ կետ	**1.** Քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետն այն մասով, որ չի նախատեսում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 81-րդ հոդվածներին **հակասող**: **2.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի	6 նոյեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1487

			4-րդ կետը և 19-րդ մասը, հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները և վիճարկվող դրույթի՝ դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը, փաստելով սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի փոխկապվածությունը Քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումներին, ինչպես նաև նկատի ունենալով սահմանադրական օրենքի պահանջը՝ իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
		379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն այնքանով, որքանով ժամկետային սահմանափակում է նախատեսում անձի իրավական վիճակի բարելավմանն ուղղված առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:	23 հոկտեմբերի 2018 թվականի ՍԴՈ-1431

		379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ և 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր <u>ՀԱՓ</u> 402-րդ հոդված	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի **տրամադրումը** բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի։ **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր*** այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով /ex jure/ չի ճանաչվում հարգելի։ **3.** Սույն գործով վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով հոդվածի 2-րդ մասի **«ուղարկվում է»** եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի **ամբողջական ակտի տրամադրումը /հասանելիությունը/** օրենքով նախատեսված սուբյեկտներին։	16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1052
		381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Այն դեպքում, երբ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, …, վերաքննիչ դատարանի	19 հունիսի 2018 թվականի ՍԴՈ-1420

		վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, …, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» դրույթ	որոշմամբ այն թողնվում է առանց քննությանե դրույթն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական և իրավունքի իրացման համարէական խոչընդոտ չհանդիսացող պահանջներին անհամապասխանության դեպքում բողոք ներկայացրած անձի կողմից այն շտկելու և կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու իրավական հնարավորությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 69, 75 և 78-րդ հոդվածներին ***հակասող***: **2.** Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին»ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 19-րդ մասի պահանջներից, հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչելը քրեական վարույթի շրջանակներում դատական ակտերը վերաքննիչ դատարանում բողոքարկելու իրենց իրավունքն իրացնող անձանց համար անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի հետևանքներ, որոնք կխաթարեն վերոհիշյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական ան- 16 վտանգությունը, սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 1-ը, հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին վիճարկվող իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ հաշվի առնելով նաև սույն որոշման հրապարակման դրությամբ և	

			մինչև համապատասխան օրենսդրական կարգավորումն ընկած ժամանակահատվածում անձանց՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում բողոքարկման իրենց իրավունքի իրացման երաշխավորման անհրաժեշտությունը։	
		394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը։	19 հունվարի 2010 թվականի ՍԴՈ - 852
		404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ և 3-րդ կետ (28.11.2007թ. խմբագրությամբ՝ 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) <u>ՀԱՓ</u> 426.2 հոդված, 426.5 հոդվածի 1-ին և 4-րդ մասեր, 426.6 հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	**3**. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 28.11.2007թ. խմբագրությամբ, հավատարմագրված փաստաբանի միջոցով բողոք բերելու մասով, 426.2 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու կապակցությամբ դիմում ներկայացնելու՝ հավատարմագրված փաստաբանի իրավունքին, 426.5 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երևան եկած հանգամանքների մասին հայտարարությունները և հաղորդումները հավատարմագրված փաստաբանին ուղարկելուն (1-ին մաս), ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքներով վարույթ հարուցելու և ուսումնասիրություններ կատարելու խնդրում հավատարմագրված փաստաբանի իրավունքի մասով (4-րդ մաս), 426.6 հոդվածը՝ հավատարմագրված փաստաբանների գործողություններին վերաբերող մասով (2-րդ և 3-րդ մասեր), ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***։ **7**. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի	8 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 765

			առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձևով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին։	
		404-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում։</u>**	22 դեկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 849
		404-րդ հոդվածի 3-րդ կետ և 407-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 3-րդ կետը և 407 հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	30 հունվարի 2007 թվականի ՍԴՈ - 674
		404-րդ հոդվածի 4-րդ մաս, 407-րդ հոդվածի 5-րդ մաս և 414.1-րդ հոդվածի 2-րդ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը՝ դատավարության այն մասնակիցների մասով, ովքեր չունեն պաշտպան և որոնց համար օրենքով սահմանված կարգով երաշխավորված չէ անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը, ճանաչել Հայաստանի Հանրապե-	17 մարտի 2015 թվականի ՍԴՈ - 1196

		մասի 2-րդ կետ	տության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաև անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը։ **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում ամրագրված դրույթները՝ վճռաբեկ բողոքը ստորագրելու պահին պաշտպան չունեցող և օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած դատավարության մասնակիցների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին ***հակասող և անվավեր***՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը։ **3.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի երրորդ նախադասությունում ամրագրված՝ «Վճռաբեկ բողոքին կցվում է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ ՀՀ սահմա-	

			նադրական դատարանի ՍԴՈ-1192 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված **<u>իրավական դիր-քորոշումների շրջանակներում</u>**: **4.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-թյանը սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	
		407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետ, 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «**եզրափակիչ մասում**» բառա-կապակցությունները ճանաչել ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 1-ին, 3, 4, 61, 63, 75, 79 և 80-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 93-րդ հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***, քանի որ իրավակիրառ պրակ-տիկայում դրանց տրված բովանդակության շրջանակ-ներում նման ձևակերպման առկայությունը նոր հան-գամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելիս վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձին հնարավորություն չի տալիս իր դիրքորոշումը հիմնա-վորելու համար վկայակոչել Սահմանադրական դա-տարանի որոշման այլ մասերում /բացի եզրափակիչ մասից/ արտահայտված՝ իրավանորմի սահմանա-դրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները, ինչը հաշվի պետք է առնվի բողոքը քննելիս: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա	28 մարտի 2017 թվականի ՍԴՈ-1359

			սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ» դրույթում «եզրափակիչ մասում» բառակապակցությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության /2005թ. Փոփոխություններով/ 93-րդ և 103-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր*** այնքանով, որքանով դրա առակայության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքի շրջանակներում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները դատական պրակտիկայում հիմք չեն ընդունվում բողոքի ընդունելության և քննության շրջանակներում:	
		407-րդ հոդվածի 4-րդ մաս և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետեր	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի և 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	20 հուլիսի 2007 թվականի ՍԴՈ - 709
		412-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշմամբ ամրագրված **<u>իրավական դիրքորոշումներին</u>** համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն	18 դեկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1062

			իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի։	
		414.1-րդ հոդվածի 2-րդ մաս, 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետեր	**2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ). ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս), 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***։ **3.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթները (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը։	11 ապրիլի 2007 թվականի ՍԴՈ - 691
		414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**։	22 դեկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ-1249
		414.1-րդ հոդվածի 2.1-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 2.1-րդ մասը՝ օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը պատճառա-	28 հուլիսի 2009 թվականի ՍԴՈ - 818

			բանված որոշմամբ վերադարձնելու պահանջը բացառելու մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	
		419-րդ հոդվածի 6-րդ կետ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	11 դեկտեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 720
		419-րդ հոդվածի 2-րդ մաս	1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն **<u>մեկնաբանությամբ</u>**, որ Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը տվյալ հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելն է: 2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ՝ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:	7 մայիսի 2019 թվականի ՍԴՈ-1459
		426.1-րդ հոդված <u>ՀԱՓ</u> 426.8 հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածը և 426.8 հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***՝ այնքանով, որքանով դրանք վերաբերում են նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությունը միայն առաջին ատյանի դատարաններին վերապահելուն և առնչվում են միայն	21 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 767

			վերջիններիս կողմից կայացրած դատական ակտերին։	
		426.1-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի **«միայն»** արտահայտությունը՝ այնքանով, որքանով բացառում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով այլ վերջնական իրավական ակտերի օրենքով սահմանված կարգով վերանայումը՝ դրանով իսկ վտանգելով անձի՝ մասնավորապես, մինչդատական վարույթում պետական իրավասու մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին ***հակասող և անվավեր***։	4 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 935
		426.2-րդ հոդվածի 4-րդ ենթակետ և 426.4-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածի 4-րդ ենթակետի և 426.4-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել։	16 սեպտեմբերի 2014 թվականի ՍԴՈ - 1163
		426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում։</u>** **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբա-	25 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 943

			նությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով, վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***: **4.** Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի համալիր լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:	
		426.7-րդ հոդված, 426.2-րդ հոդվածի 2-րդ մաս և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***: **2.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասը և դրա հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ 426.4 հոդվածի	13 հոկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 833

		<u>ՀԱՓ</u> 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	1-ին մասի 1-ին կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր*** այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, ովքեր տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու պոտենցիալ հնարավորություն: **3.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>** համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	
		426.9-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը՝ **<u>սահմանադրաիրավական այն բովանդակությամբ,</u>** որը բացառում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **3.** Իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը ... չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակու-	15 հուլիսի 2011 թվականի ՍԴՈ - 984

			թյանը:	
		426.9-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, հաշվի առնելով, որ վերանայման վարույթի արդյունքում ընդունված նոր դատական ակտի եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:	31 մայիսի 2013 թվականի ՍԴՈ - 1099
		427-րդ հոդվածի երկրորդ մաս, 429-րդ և 430-րդ հոդվածներ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի երկրորդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2**. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի պահանջների հիման վրա՝ գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 429-րդ և 430-րդ հոդվածների մասով, կարճել:	25 հունվարի 2011 թվականի ՍԴՈ - 933
		52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458 և 459-րդ հոդվածներ	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458 և 459-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ամրագրված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	24 հոկտեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1382
		499.9-րդ հոդված	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխա-	24 դեկտեմբերի 2013 թվականի

			նում են ՀՀ Սահմանադրությանը: **2**. «Քաղաքացի Գարեգին Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների մասով, կարճել:	ՍԴՈ - 1134
70.	**«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 13.06.2006թ.)**	5-րդ հոդված	**1.** ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	5 փետրվարի 2008 թվականի ՍԴՈ - 733
71.	**ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունվել է 18.04.2003թ.)**	13-րդ հոդված, 84-րդ հոդված, 12-րդ գլխի նորմեր	**1.** «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, 66-րդ հոդվածի, 426.2-րդ և 426.3-րդ հոդվածների, 49-րդ գլխի նորմերի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի, «Պատժից ազատելը» վերտառությամբ 12-րդ գլխի նորմերի, «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի .... ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի, 12-րդ գլխի նորմերի մասով, կարճել:	14 փետրվարի 2017 թվականի ՍԴՈ-1348

			2. ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:	
		51-րդ հոդվածի 4-րդ մաս, 54-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***: **2.** ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	23 ապրիլի 2013 թվականի ՍԴՈ - 1082
		55-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տու-	12 հուլիսի 2011 թվականի ՍԴՈ - 983

			ժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին ***հակասող և անվավեր***:	
		57-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ **սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում**:	6 փետրվարի 2018 թվականի ՍԴՈ-1400
		75-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	18 մարտի 2014 թվականի ՍԴՈ - 1141
		177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	11 մայիսի 2010 թվականի ՍԴՈ - 882
		213-րդ հոդված	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: **2.** Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները գործի վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով, կարճել:	5 ապրիլի 2011 թվականի ՍԴՈ - 947

		244-րդ հոդված	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	26 հունվարի 2016 թվականի ՍԴՈ - 1252
		301-րդ հոդված	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	14 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 766
		310.1-րդ հոդվածի 1-ին մաս և 314.3-րդ հոդված	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասը և 314.3-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը հետևյալ **<u>մեկնաբանությամբ</u>**. 1) արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու սահմանադրական սկզբունքը վերաբերում է ոչ միայն քրեական օրենքին, այլ նաև այն օրենքներին, որոնց հղում է կատարվում Քրեական օրենսգրքի բլանկետային նորմերով, 2) Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած» արտահայտությունը, ենթադրում է, որ անձին ներկայացված քրեական մեղադրանքն իրավաչափ է, բացակայում են քրեական հետապնդումը բացառող, ինչպես նաև արարքի պատժելիությունը հետադարձ ուժով վերացնող հանգամանքները, 3) իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքը	16 ապրիլի 2019 թվականի ՍԴՈ-1453

			ներառում է նաև քրեական գործի մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննելիս մեղադրյալին ներկայացված մեղադրանքի իրավաչափությունը նրա կողմից վիճարկելու իրավունքը, որը պետք է երաշխավորվի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում: **2.** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող դրույթները դիմողի նկատմամբ կիրառվել են այլ՝ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:	
		311-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ գործի վարույթը կարճել:	19 նոյեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1124
		315-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	4 նոյեմբերի 2014 թվականի ՍԴՈ – 1174
		336-րդ և 349-րդ հոդվածներ	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Էդիկ Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ և 349-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը	19 սեպտեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1377

			որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի մասով **կարճել**:	
		343-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով կիրառելի չէ նաև դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ - հոդվածի 1-ին մասի պահանջներին ***հակասող և անվավեր***:	14 հունվարի 2010 թվականի ՍԴՈ - 851
		343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	**1.** «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի մասով **կարճել**:	8 դեկտեմբերի 2017 թվականի ՍԴՈ-1394
72.	**ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-83-Ն ՀՀ օրենք (ընդունվել է 16.05.2016թ.)**	Ամբողջությամբ	**3.** «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:	14 փետրվարի 2017 թվականի ՍԴՈ-1348
73.	**ՀՀ քրեակատարողական օրենսգիրք (ընդունվել է 24.12.2004թ.)**	59-րդ հոդվածի 2-րդ մաս և 98-րդ հոդվածի 1-ին մաս	**2.** ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը և 98-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման փաստի ուժով ինքնին սահմանափակում են դատապարտյալի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության 19 ազատության իրավունքները, ճանաչել Սահմանադրության 31,	5 փետրվարի 2019 թվականի ՍԴՈ-1442

			33 և 78-րդ հոդվածներին ***հակասող***: **4.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի պահանջները, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված դրույթները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի հետևանքներ, որոնք կխաթարեն այդ դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 5-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին և Կառավարությանը այդ դրույթները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
		115-րդ հոդված	**2.** ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: **3.** ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածներին ***հակասող և անվավեր***:	5 փետրվարի 2008 թվականի ՍԴՈ -733
74.	**«Հայրենական մեծ պատերազմի**	1-ին և 4-րդ հոդվածներ	**1.** «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին և 4-րդ հոդվածները համա-	3 հունիսի 2011 թվականի

	վետերանների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 02.12.1998թ.)		պատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	ՍԴՈ - 966
75.	**«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 25.12.2003թ.)**	12-րդ հոդվածի երկրորդ նախադասություն	**1.** «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2¬րդ նախադասությունում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ հանձնաժողովի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով փոփոխման ենթակա չեն, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2¬րդ նախադասությունում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ հանձնաժողովի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով բողոքարկման ենթակա չեն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 (1¬ին մաս) և 43 (2¬րդ մաս) հոդվածներին ***հակասող և անվավեր***:	16 հունվարի 2007 թվականի ՍԴՈ - 673
76.	**«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27.11.2006թ.)**	3-րդ հոդվածի 1-ին մաս, 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 6-րդ, 7-րդ հոդվածներ	**1.** «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (2006 թվականի նոյեմբերի 27-ի խմբագրությամբ) 3 հոդվածի 1-ին մասը, 4 հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 6 հոդվածը, 7 հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2006թ. ՍԴՈ-630 և սույն որոշումներում արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	14 հուլիսի 2009 թվականի ՍԴՈ - 815
77.	**«Հարկերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 14.04.1997թ. ուժը կորցրած է ճանաչվել**	15-րդ հոդվածի «զ» կետ	**1**. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	22 սեպտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 832
		22-րդ հոդվածի	**3.** «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասը՝	18 հուլիսի

	01.01.2018թ.)	2-րդ մաս	սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>** համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	2009 թվականի ՍԴՈ - 816
		23-րդ հոդված	**1.** «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	18 փետրվարի 2014 թվականի ՍԴՈ - 1139
		26-րդ հոդվածի 5-րդ մաս	**2.** «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	25 նոյեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 780
		28-րդ հոդվածի 1-ին պարբերության վերջին նախադասություն	**1.** «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին պարբերության վերջին նախադասությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	20 դեկտեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 1007
		30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասեր	**1.** «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	30 հունվարի 2013 թվականի ՍԴՈ - 1073
		30.2-րդ հոդվածի 18 և 19-րդ մասեր	**1.** «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18 և 19-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	10 սեպտեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1106
78.	**«Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 17.02.1998թ. ուժը կորցրած է ճանաչվել 03.09.2005թ.)**	24-րդ հոդված	**1.** «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածը ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 5 և 8 հոդվածների պահանջներին այնքանով, որքանով որ պետական լիցենզավորման ենթակա, պետական կամ բնական մենաշնորհ հանդիսացող գործունեութ-	27 հունվարի 1999 թվականի ՍԴՈ - 152

			յան տեսակների հստակեցումը, այդ ոլորտներում հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը և պետության ու հասարակության անվտանգության և օրինական շահերից, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակներից ելնելով տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները, որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ նախապես ոչ թե սահմանվել են օրենքով, այլ գործադիր իշխանության կողմից, իսկ օրենսդիրն անցումային դրույթների ձևով օրենքի ուժ է հաղորդել կոնկրետ հասցեագրված պայմանների, որոնցում նաև տեղ են գտել ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ձևակերպումներ: Միաժամանակ, նկատի ունենալով, որ «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածում հիշատակվող թիվ 60 լիցենզիայում նախատեսված և ՀՀ Ազգային ժողովի կողմից փաստորեն օրենքի աստիճանի բարձրացված առանձին դրույթներ ՀՀ կառավարության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բնույթ են ստացել և որոնց չկատարումը երկրի համար հղի է որոշակի հետևանքներով, նկատի ունենալով նաև, որ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի հիման վրա «Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը», հաշվի առնելով, որ քննության առարկա 24 հոդվածի իրավաբանական ուժը կորցնելը օտարերկրյա ներդրողին տրված լիցենզիայի գործողության վրա անմիջական ազդեցություն չի կարող ու-	

			նենալ, գնահատելով ձևավորված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը պարտավոր են իրենց լիազորությունների շրջանակներում այդ ժամանակահատվածում գտնել օրենսդրական և իրավակիրառական այնպիսի լուծումներ, որոնք օրենքի մակարդակով կսահմանեն բնական մենաշնորհ հանդիսացող ոլորտների վերաբերյալ պետության քաղաքականությունը, կապահովեն քննության առարկա հոդվածի դրույթների համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրության պահանջներին, ինչպես նաև ՀՀ կողմից ստանձնված պարտավորությունների՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան կատարումը:	
79.	**«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 09.10.2000թ.)**	28-րդ հոդվածի 10-րդ մաս« 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ և 4-րդ մաս« 35-րդ հոդվածի 1-ին մաս« 36-րդ հոդված« 40-րդ հոդվածի 1-ին մաս« 42-րդ հոդվածի 2-րդ մաս« 59-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 10-րդ մասը, համաձայն որի՝ «Հանրային հեռուստառադիոընկերության կանոնադրությունը հաստատում է ՀՀ Ազգային ժողովը», այս ձևակերպմամբ ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 62 հոդվածի պահանջներին: **2.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին մասի «գ» կետը, համաձայն որի՝ «Խորհուրդը՝ մշակում և Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության կանոնադրությունը», ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 75 հոդվածի առաջին մասի պահանջներին: **3.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ «Խորհուրդն իր գործունեության մասին ամենամյա հաղորդում է ներկայացնում ՀՀ Նախագահին և Ազգային ժողով», այնքանով, որքանով չի առաջացնում իրավական հետևանք-	11 հունվարի 2001 թվականի ՍԴՈ - 278

			ներ, չի հակասում ՀՀ Սահմանադրությանը: **4.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ «Խորհուրդը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա՝ Հանրային հեռուստառադիոընկերության ծախսերի նախահաշիվը (բյուջեն)՝ առանձին տողով նշելով Խորհրդին, Հանրային հեռուստաընկերությանը և Հանրային ռադիոընկերությանը հատկացվելիք գումարները, և ներկայացնում է ՀՀ կառավարություն, վերջինս էլ դրանք ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը», համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **5.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածը, համաձայն որի՝ «Խորհուրդը Հանրային հեռուստառադիոընկերության գործունեության տարեկան նպատակային ծրագիրը և հաշվետվությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացնում է Ազգային ժողովի հաստատմանը», ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 4, 5, 62 և 75 հոդվածների պահանջներին: **6.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր տարի Ազգային հանձնաժողովը ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում ՀՀ Ազգային ժողով: Ազգային ժողովն այդ հաշվետվության հավաստիությունը ճշտելու նպատակով, Վերահսկիչ պալատի միջոցով, կարող է անցկացնել Ազգային հանձնաժողովի գործունեության աուդիտ», ֆինանսական հաշվետվությունը ներկայացնելու կարգին վերաբերող դրույթի մասով ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 75 և 89 հոդվածների պահանջներին:	

			7. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 42 հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «Ազգային հանձնաժողովի կանոնադրությունը հաստատում է ՀՀ Ազգային ժողովը», այս ձևակերպմամբ ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 62 հոդվածի պահանջներին: **8.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ «Ազգային հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի ձևավորումից հետո՝ մեկամսյա ժամկետում, ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի կանոնադրությունը, որը հաստատում է Ազգային ժողովը», ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 75 հոդվածի առաջին մասի պահանջներին:	
		53-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը՝_իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին, 45 հոդվածի և 83.5. հոդվածի 2-րդ կետի պահանջներին ***հակասող և անվավեր***: **2.** Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով, որ, մի կողմից, եթերավճարի գանձումն առնչվում է բյուջետային հարաբերությունների կայունությանը, մյուս կողմից՝ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից հեռուստառադիոընկերությունների համար եթերավճար վճարե-	13 մայիսի 2008 թվականի ՍԴՈ - 753

			լու պարտավորության անմիջական ընդհատումը կարող է անհավասար վիճակ ստեղծել ռադիոհաճախականություն օգտագործող տնտեսավարող սուբյեկտների միջև՝ խաթարելով սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահին վեճի առարկա դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաև նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանը հեռուստառադիոընկերություններից եթերավճարի գանձման օրենսդրական ներկա կարգավորումն անհարիր համարելով իրավական պետության սկզբունքներին՝ միաժամանակ ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց վճարելու պարտականությունն ինքնին իրավաչափ է համարում, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008թ. դեկտեմբերի 1-ը:	
80.	**«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 06.02.2002թ.)**	36-րդ հոդվածի 4-րդ մաս	**1**. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման փաստի ուժով ինքնին սահմանափակում է կալանավորված անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքները, ճանաչել Սահմանադրության 31, 33 և 78-րդ հոդվածներին ***հակասող***: **4.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի պահանջները, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում	5 փետրվարի 2019 թվականի ՍԴՈ-1442

			նշված դրույթները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի հետևանքներ, որոնք կխաթարեն այդ դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 5-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին և Կառավարությանը այդ դրույթները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
81.	**«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 08.07.2005թ.)**	13-րդ հոդվածի 2-րդ մաս և 10-րդ մասի 2-րդ կետ	**1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը՝ տրանսպորտային միջոցի հետ կապված գործարքներից ծագող սեփականության իրավունքը՝ գործարքը ստորագրելու օրվանից՝ 15-օրյա ժամկետում գրանցման ներկայացնելու մասով, համապատասխանում է **<u>Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ</u>**, որ անձի սեփականության սահմանադրական իրավունքի պաշտպանությունն ապահովելու համար տրանսպորտային միջոցի պետական գրանցման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնված լինելու դեպքում ենթակա է վերականգնման: **2.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	1 հոկտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1479
82.	**«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք**	7-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ	**1.** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը	6 մայիսի 2005 թվականի ՍԴՈ - 563

	(ընդունվել է 21.10.2003թ. ուժը կորցրած է ճանաչվել 04.02.2017թ.)	պարբերության երկրորդ նախադասություն	նման խմբագրությամբ՝ Պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու և դատարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքի մասով, պայմանավորված չէ անկախ և անկողմնակալ արդարադատություն իրականացնելու անհրաժեշտությամբ, ստեղծում է ներ օրենսդրական հակասություն, հաշվի առնելով նաև իրավակիրառական պրակտիկան՝ միջամտություն է դատական իշխանության գործառույթներին և ***չի համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 39 հոդվածին և 97 հոդվածի 1-ին մասի դրույթներին: **2.** Մարդու իրավունքների պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ, ենթակա է բավարարման, եթե դա միջամտություն չէ դատական վարույթին՝ չի առնչվում կոնկրետ գործով արդարադատության իրականացմանը, չի վերաբերում դատարանի վարույթում գտնվող գործի քննության նյութական և դատավարական բնույթի հարցերին: Մարդու իրավունքների պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ, հակասական իրավակիրառական պրակտիկա չառաջացնելու համար անհրաժեշտ է հստակորեն ամրագրել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում:	
83.	**«Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ**	7-րդ հոդված	**1.** «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն այն	14 սեպտեմբերի 2010 թվականի

	փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 16.04.2002թ.)	<u>ՀԱՓ</u> 3-րդ հոդվածի 1-ին մաս, 4-րդ և 9-րդ հոդվածներ	մասով, որով առնչվում է Հայաստանում չիրականացվող փոխպատվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին և 14-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 4-րդ և 9-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	ՍԴՈ - 913
84.	**«Ներդրումային ֆոնդերի մասին»ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** «Ներդրումային ֆոնդերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-68-Ն օրենք), …. համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ **<u>արտահայտված իրավական դիրքորոշումները</u>**:	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
85.	**«Նոտարիատի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 04.12.2001թ.)**	27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն <u>ՀԱՓ</u> 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերություն	**1.** «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 1-ին մասին 1-ին պարբությունը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը ***հակասող***: **2.** Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետու-	10 մայիսի 2016 թվականի ՍԴՈ - 1271

			թյան Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի հոկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
		56-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «Ջուլետա Եսայանի դիմումի հիման վրա՝ ... «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	25 մայիսի 2017 թվականի ՍԴՈ - 1371
		67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	**1.** «Քաղաքացի Գրիգորի Վահանյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	25 փետրվարի 2014 թվականի ՍԴՈ - 1140
86.	**«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-74-Ն օրենք), … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224

87.	**«Նույնականացման քարտերի մասին»ՀՀ օրենք (ընդունվել է 30.11.2011թ.)**	4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասություն, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասություն	**1.** «Նույնականացման քարտերի մասին»ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությամբ, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ **սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում**:	8 դեկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ - 1244
88.	**«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 30.09.1997թ.)**	57-րդ հոդվածի 3-րդ կետ (մինչև 09.01.2009թ. խմբագրությամբ)	**1.** «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը (մինչև 09.01.2009թ. խմբագրությամբ) համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	7 հունիսի 2011 թվականի ՍԴՈ - 967
		69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթ	**1.** «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած **իրավական դիրքորոշումների շրջանակում**:	28 ապրիլի 2015 թվականի ՍԴՈ - 1203

89.	**«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 16.04.2001թ.)**	5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր	**4.** «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը **սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ,** համաձայն որի՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միշտ պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները: **5.** «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում, անհրաժեշտ իրավական երաշխիքներ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին ***հակասող և անվավեր***:	24 հունվարի 2017 թվականի ՍԴՈ-1339
90.	**«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 04.02.2014թ.)**	5-րդ հոդվածի 3-րդ մաս, 9-րդ հոդվածի 4-րդ մաս	1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքնրի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	6 դեկտեմբերի 2016 թվականի ՍԴՈ-1326

		9-րդ հոդվածի 3-րդ մաս

			մանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
		9-րդ հոդվածի 6-րդ մաս	**1.** «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը՝ երկրորդ և երրորդ պարբերություններում «մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը» ձևակերպումների մասով համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	16 սեպտեմբերի 2016 թվականի ՍԴՈ-1302
		9-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության՝ «առնվազն 10 տարի» ձևակերպման մասով	**1.** «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերությունը ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին ***հակասող:*** **2.** «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ	18 հունիսի 2019 թվականի ՍԴՈ-1463

		<u>ՀԱՓ</u> 9-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով, 9-րդ հոդվածի	համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով, ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին ***հակասող***: **3.** «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին ***հակասող***: **4.** «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին ***հակասող***: **5.** «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի չորրորդ պարբերությամբ նախա-	

		6-րդ մասի երրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները, 9-րդ հոդվածի 6-րդ մասի չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը, ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ դատավորներին վերաբերող մասով	տեսված իրավակարգավորումը, ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ *դատավորներին վերաբերող մասով*, ճանաչել Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասին ***հակասող***: **6.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի, ինչպես նաև 71-րդ հոդվածի 10-րդ մասի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին նշված դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման բաց՝ դատավորների կենսաթոշակային ապահովության ոլորտում, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հոկտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
91.	**«Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 05.06.2000թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.01.2009թ.)**	16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետ	**1.** «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի և քաղաքացի Կարապետ Թառլոյանի դիմումի հիման վրա՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	22 հունվարի 2013 թվականի ՍԴՈ - 1065

92.	**«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 17.12.1997թ.)**	13-րդ հոդված	**1.** ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.12.1997թ. ընդունված՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշ-նորհման) մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	11 սեպտեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 714
93.	**«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 19.11.2002թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.01.2013թ.)**	9-րդ հոդվածի 3-րդ մաս	**3.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասը՝ իրավակիրառական պրակ-տիկայի կողմից դրան տրված բովանդակության մա-սով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կեն-սաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընտրութ-յուն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 31 և 83.5-րդ հոդ-վածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	10 փետրվարի 2010 թվականի ՍԴՈ - 865
		47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	**1.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանա-դրության 18 և 37 հոդվածներին ***հակասող և անվավեր***: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավա-հարաբերությունների վրա:	29 հունվարի 2008 թվականի ՍԴՈ - 731
		57-րդ հոդված	**1.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահ-մանադրությանը:	23 հոկտեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 716
		73-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին ***հակասող և անվավեր***: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը	15 հունվարի 2008 թվականի ՍԴՈ -723

			տարածել նաև դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:	
94.	**«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 22.12.2010թ.)**	14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ, 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր	**1.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության մասով գործի վարույթը **կարճել**: **2.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի մասով գործի վարույթը **կարճել**: **3.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**, և այն ընդունման պահից վեց ամսվա ընթացքում չէր կարող կիրառվել Հայաստանի Հանրապետությունից ժամանակավոր բացակայած՝ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով, «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1231-Ն որոշման 10-րդ կետով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում հյուպատոսական հաշվառման են կանգնած եղել: **4.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	14 դեկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ -1061

		20-րդ հոդվածի 1-ին մաս	1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը՝ «հինգ տարվա ընթացքում» արտահայտության և «Եթե զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ, ապա զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից:» նախադասության մասով, ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***:	12 հուլիսի 2019 թվականի ՍԴՈ-1475
		35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերություն և 9-րդ մասի 1-ին պարբերություն, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	**1.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության և 9-րդ մասի 1-ին պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	2 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ -1050
		36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն	**1.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ «եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 և 31-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	14 հոկտեմբերի 2014 թվականի ՍԴՈ -1167
		41-րդ հոդվածի	**1.** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-	29 նոյեմբերի

		1-ին մասի 12-րդ կետ	րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված իրավական բովանդակության շրջանակներում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 60, 61, 78, 79 և 83-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***: **2.** Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթը համակարգային առումով փոխկապակցված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 36-րդ, 41-րդ և մի շարք այլ հոդվածների դրույթների հետ, և հաշվի առնելով սույն որոշման հրապարակման պահին տվյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությամբ պայմանավորված հնարավոր հետևանքները, ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 102-րդ հոդվածի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի մասով սույն որոշման ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ սահմանել 2017 թվականի հոկտեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանն իրենց իրավասությունների շրջանակներում քայլեր ձեռնարկել համակարգային ամբողջականության մեջ վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը երաշխավորելու ուղղությամբ: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:	2016 թվականի ՍԴՈ -1325

95.	**«Պետական կենսաթոշակների մասին»ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Պետական կենսաթոշակների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-77-Ն օրենք),…համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
96.	**«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 23.10.2001թ.)**	4-րդ և 5-րդ հոդվածներ	**1.** «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ .... «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների..... մասով կարճել:	7 մայիսի 2013 թվականի ՍԴՈ - 1092
97.	**«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 27.12.1997թ.)**	9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետեր	**1.** «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը՝ սույն որոշման մեջ ամրագրված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում,</u>** համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	25 մայիսի 2010 թվականի ՍԴՈ - 890
		9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետ	**1.** «Արուսյակ Աբրահամյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	27 հունիսի 2017 թվականի ՍԴՈ - 1375
		22-րդ հոդված	**1.** «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում,	14 դեկտեմբերի 2010 թվականի

			այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին ***հակասող և անվավեր***: **2.** Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը և օրենքի բացի հաղթահարումը նաև օրենսդրական փոփոխությունների և համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաև նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ վեճի առարկա հոդվածի անմիջական անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ այդ հոդվածի առկա՝ սահմանադրականության խնդիրներ չառաջացնող, դրույթների իրացման և մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը:	ՍԴՈ - 929
		22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերություն	**2**. «Պետական տուրքի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը **<u>սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ</u>**, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական	10 հուլիսի 2018 թվականի ՍԴՈ-1423

			իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում: **3.** «Սահմանադրական դատարանի մասին»ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներին համապատասխան՝ սույն գործով դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով: **4.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով իրենց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման վերոհիշյալ իրավունքը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում սույն գործով դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան:	
98.	**«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 03.12.1996թ.)**	8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետ, 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասեր	**1.** «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետը և 12-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական	6 մարտի 2012 թվականի ՍԴՈ - 1010

			ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչել ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, նաև նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/1314/05/10 դատական գործով 23.11.2010թ. կայացրած վճռում վերազանցել է իր լիազորությունները՝ հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջը՝ արձանագրել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը չի հակասում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին և 83.5 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերին»:	
99.	**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 01.06.2006թ. ուժը կորցրած է ճանաչվել 09.04.2018թ.)**	68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերություն և 12-րդ մաս <u>ՀԱՓ</u> 69 հոդվածի 12-րդ մաս	**1.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության և 12-րդ - մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի դրույթները, որոնք համակարգային առումով փոխկապակցված են օրենքի վիճարկվող դրույթների հետ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր*** այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքնե-	15 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 751

			րի հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:	
		68-րդ հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերություն	**2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից ներկայացրած **<u>իրավական դիրքորոշման շրջանակներում</u>**:	11 մայիսի 2007 թվականի ՍԴՈ - 701
		69-րդ հոդվածի 12-րդ մաս	**3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասով գործի վարույթը կարճել:	25 փետրվարի 2011 թվականի ՍԴՈ - 943
		71-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Օվսանա Գալստյանի դիմումի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	29 սեպտեմբերի 2015 թվականի ՍԴՈ - 1227
100.	**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունվել է 17.01.2018թ.)**	17-րդ հոդվածի 1-ին մաս, «Սահմանադրական դատարանի	**1.** «Սահմանադրական դատարանի մասին»սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտ-	6 նոյեմբերի 2018 թվականի ՍԴՈ - 1434

		մասին»սահմանադրական օրենքի՝ Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների բացակայության մասով	ության ժամկետի սահմանումը վերապահում է «Ազգային ժողովի կանոնակարգ»սահմանադրական օրենքի իրավակարգավորմանը՝ ճանաչել Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությանը, 166-րդ հոդվածի 9-րդ մասին և 167-րդ հոդվածի 3-րդ մասին ***հակասող***: **3.** «Սահմանադրական դատարանի մասին»սահմանադրական օրենքը՝ Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների բացակայության մասով, համապատասխանում է Սահմանադրությանը: **4.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված վիճարկվող դրույթների Սահմանադրությանը հակասող ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի խոչընդոտներ Սահմանադրական դատարանի կազմի համալրման, ըստ այդմ, նրա բնականոն գործունեության և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու համար, որոնցով կխաթարվի վերոհիշյալ դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը՝ սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի ապրիլի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Սահմանադրական դատարանի մասին»սահմանադրական օրենքի և «Ազգային ժողովի կանոնակարգ»սահմանադրական օրենքի իրավակարգավորումները համապա-	

			տասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
101.	**«Սնանկության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 25.12.2006թ.)**	3-րդ հոդվածի 2-րդ մասի «…նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով և 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետ	**1.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «…նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***: **2.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	25 փետրվարի 2008 թվականի ՍԴՈ - 735
		19-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	12 ապրիլի 2011 թվականի ՍԴՈ - 954
		20-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	11 հունվարի 2011 թվականի ՍԴՈ – 932
		54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ	**1.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող հինգ տարվա ընթացքում	31 հունվարի 2017 թվականի ՍԴՈ-1340

			պարտապանի հետ փոխկապակցված անձանց պարտապանի կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն **որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ**: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի հիմքով դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման, հաշվի առնելով, որ վեճի առարկա դրույթը դիմողների նկատմամբ չի կիրառվել սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից ներկայացված մեկնաբանությամբ:	
		82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետ	**1.** «Քաղաքացի Հենրիկ Պողոսյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը **կարճել**:	22 նոյեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 998
		90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերություն <u>ՀԱՓ</u> 90-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության «…և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթը՝ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 4-րդ մասի հետ, այն մասով, որով **դատարանի կողմից հարգելի ճանաչված դեպքերում** բացառություն չի նախատեսում նաև ավարտված սնանկության գործի շրջանակներում պահանջ չներկայացրած պարտատերերի համար,	27 հունվարի 2015 թվականի ՍԴՈ - 1189

			նրանց նկատմամբ սահմանելով իրավունքի պաշտպանության ոչ համաչափ սահմանափակում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին ***հակասող և անվավեր***:	
102.	**«Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 21.06.2014թ.)**	Ամբողջությամբ	**4.** … «Սնանկության մասին»Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-72-Ն օրենք), … համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումները</u>**:	7 հուլիսի 2015 թվականի ՍԴՈ-1224
103.	**«Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 24.09.2003թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.06.2012թ.)**	11-րդ հոդված	**1.** «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) և 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ մասեր), 42, 43 և 48 (կետ 12) հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի և 68 հոդվածի 12-րդ մասի համաձայն սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:	4 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 649

104.	**Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (ընդունվել է 06.12.1985թ.)**	32-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	21 հունիսի 2016 թվականի ՍԴՈ - 1282
		37-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	8 ապրիլի 2014 թվականի ՍԴՈ - 1143
		123.3-րդ հոդված	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	17 դեկտեմբերի 2013 թվականի ՍԴՈ - 1130
		165-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	16 նոյեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 924
		169.8-րդ հոդված	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	19 սեպտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1048
		170^3-րդ հոդված	**2.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակնե-ում</u>**:	18 փետրվարի 2014 թվականի ՍԴՈ - 1139
		180^1-րդ հոդվածի	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180^1-րդ հոդվածի 15-րդ մասը համապա-	20 սեպտեմբերի 2016 թվականի

		15-րդ մաս	տասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	ՍԴՈ - 1304
		182-րդ հոդված	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	8 հուլիսի 2016 թվականի ՍԴՈ - 1291
		258-րդ, 260-րդ, 262-րդ, 266-րդ և 267-րդ հոդվածներ	**1.** «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ, 260-րդ, 262-րդ, 266-րդ և 267-րդ հոդվածների, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» **գործի վարույթը մասամբ**՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի **260-րդ հոդվածի 3-րդ մասի**՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի ադմինիստրացիան» դրույթի մասով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի **262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի** դրույթների մասով կարճել, **քանի որ դրանց առնչությամբ առկա են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ**, միաժամանակ շեշտելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1048, ՍԴՈ-1059 որոշումների ոչ պատշաճ կատարումը երկրում սահմանադրական օրինականության հաստատման լուրջ սպառնալիք է դարձել: **2.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ և 262-րդ հոդվածների մյուս դրույթ-	24 հունվարի 2017 թվականի ՍԴՈ-1339

			ները, ինչպես նաև 258-րդ և 267-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի **սահմանադրաիրավական բովանդակությամբ**, համաձայն որի՝«խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից **փաստացի զրկելու պահից սկսած** ազատությունից զրկված անձի համար ապահովվում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ: **3.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը **սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ**, համաձայն որի՝այդ հոդվածով դատարանին չվկայակոչելը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ խոչընդոտի վարչական ձերբակալման իրավաչափությունը դատարանում վիճարկելու՝ անձի իրավունքի իրացմանը:	
		260-րդ հոդվածի 3-րդ մաս և 262-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար **ձերբակալված անձի խնդրանքով** նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի ադմինիստրացիան» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին ***հակասող և անվավեր***: **2.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասի և 103-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջ-	23 նոյեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1059

		<u>ՀԱՓ</u> 262-րդ հոդվածի 3-րդ մաս	ներին ***հակառող և անվավեր***: **3.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին ***հակառող և անվավեր***:	
		283-րդ հոդվածի 6-րդ մաս, 298-րդ հոդվածի 3-րդ մաս և 305-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** … Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասը, 298-րդ հոդվածի 3-րդ մասը և 305-րդ հոդվածի 4-րդ մասը, … համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	26 մայիսի 2015 թվականի ՍԴՈ - 1210
		305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր	**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի դրույթները համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	13 նոյեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1056
105.	**Վանաձոր համայնքի ավագանու N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումներ (ընդունվել են 31.03.2017թ.)**	Ամբողջությամբ	**5.** Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումները կորցնում են իրենց իրավաբանական ուժը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի հիմքով՝ սույն որոշմամբ նախատեսված վերջնաժամկետի ավարտման պահից:	10 նոյեմբերի 2017 թվականի ՍԴՈ-1384
106.	**«Վարչարարության հիմունքների և վարչական**	2-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.** ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ …, «Վարչարարության հիմունքների և	27 հոկտեմբերի 2009 թվականի

	վարույթի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 18.02.2004թ.)		վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանմամբ, մասով, **կարճել**:	ՍԴՈ - 836
		3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետ	**3.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	10 մայիսի 2016 թվականի ՍԴՈ-1271
		36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	**1.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	30 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1054
		63-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Լյուբով Փիլոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝... «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի մասով **կարճել**: **2.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	1 դեկտեմբերի 2015 թվականի ՍԴՈ-1238
		63-րդ հոդվածի 3-րդ մաս	««ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ ՀՀ Սահմանադրու-	24 նոյեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 839

			թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	
		66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետեր	1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը: 2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն **մեկնաբանությամբ**, որ «վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից» դրույթը ներառում է ոչ միայն այդ ակտով ամրագրված որևէ իրավունքի կամ ազատության կամ բարենպաստ այլ պայմանի ամբողջական, այլև այդ իրավունքի կամ ազատության կամ պայմանի մասնակի իրականացումը հասցեատիրոջ կողմից, որը յուրաքանչյուր կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում պետք է գնահատվի վարչական մարմնի, դատական պաշտպանության ժամանակ՝ նաև դատարանի կողմից: 3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:	30 ապրիլի 2019 թվականի ՍԴՈ-1458

		88-րդ հոդված	**1.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածը, … համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված **<u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	26 մայիսի 2015 թվականի ՍԴՈ - 1210
		96-րդ հոդված	**2.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:	17 դեկտեմբերի 2019 թվականի ՍԴՈ-1497
		104-րդ հոդվածի 1-ին մաս	**1**. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի **<u>սահմանադրաիրավական բովանդակությամբ</u>**, համաձայն որի՝ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հնարավորությունը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու **բոլոր** հիմնական իրավունքների խախտման դեպքերում: **2.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասում առկա «համարժեք չափ» եզրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դիտարկվող եզրույթը մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների	7 նոյեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1383

			հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը ներառում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 և 1087.2-րդ հոդվածներով սահմանված՝ ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն չափերը, ինչպես նաև համապատասխան չափանիշները, որոնք պետք է հաշվի առնի վարչական մարմինն անձին պատճառած ոչ նյութական վնասի դրամական հատուցման չափը որոշելիս: **3.** «»Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ հաշվի առնելով, որ «»Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները դիմողի նկատմամբ կիրառվել են այլ մեկնաբանությամբ:	
107.	**«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 30.06.1996թ. ուժը կորցրած է ճանաչվել 21.06.2002թ.)**	3-րդ հոդվածի 2-րդ մաս	**3.** Հայաստանում օրինական կարգով մշտական բնակություն հաստատած փախստականների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը մասնակցելու իրավունքը բացառող՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ մասի..... դրույթները ***չեն համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 2, 4, 8, 27, 105 հոդվածների պահանջներին:	16 հոկտեմբերի 1999 թվականի ՍԴՈ - 179
108.	**«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 07.05.2002թ.)**	64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր, 69-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 6-րդ, 9-րդ և 179-րդ հոդվածների պահանջներին ***հակասող:*** **2.** «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի	10 նոյեմբերի 2017 թվականի ՍԴՈ - 1384

			64-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ **<u>արտահայտ-ված իրավական դիրքորոշումների շրջանակում</u>**: **3.** «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ **<u>արտահայտ-ված իրավական դիրքորոշումների շրջանակում</u>**: 4. Հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները և վեճի առարկա օրենքի դրույթների՝ դրանց համապատասխանեցման անհրա-ժեշտությունը, փաստելով սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավա-դրույթի համակարգային առումով փոխկապվածությու-նը «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 5-րդ գլխի իրավակարգավորումների հետ, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի պահանջը՝ իրավական ան-վտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվակա-նի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապե-տության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմա-նել 2018 թվականի մարտի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողո-վին «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաս-տանի Հանրապետության օրենքի իրավակարգավո-րումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	

109.	**«Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 14.05.1996թ. ուժը կորցրած է ճանաչվել 28.02.1999թ.)**	17-րդ հոդված	**1.** «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածը ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների ամփոփման հետ կապված դատական վեճերով իրավակիրառական պրակտիկան պետք է համապատասխանի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածում ամրագրված՝ գերագույն դատարանի՝ կոլեգիալ կարգով կայացրած որոշումների վերջնական լինելու մասին դրույթին:	19 մայիսի 1997 թվականի ՍԴՈ - 56
110.	**«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 06.02.2002թ.)**	5-րդ հոդվածի 2-րդ կետ	**1.** «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:	18 դեկտեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 721
111.	**«Փախստականների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 03.03.1999թ. ուժը կորցրած է ճանաչվել 24.01.2009թ.)**	18-րդ հոդվածի 8-րդ մաս	**2.** «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 8-րդ մասի դրույթները, այնքանով որքանով վերաբերվում են փախստականների իրավունքի սահմանափակմանը՝ մասնակցելու պետության կառավարմանը (ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին, համապետական հանրաքվեներին), համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: **3.** Հայաստանում օրինական կարգով մշտական բնակություն հաստատած փախստականների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը մասնակցելու իրավունքը բացառող՝ .... «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 8-րդ մասի դրույթները ***չեն համապատասխանում*** ՀՀ Սահմանադրության 2, 4, 8, 27, 105 հոդվածների պահանջներին:	16 հոկտեմբերի 1999 թվականի ՍԴՈ - 179

		25-րդ հոդված	**1.** ՀՀ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի մարտի 3-ին ընդունված՝ «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածը՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի մարտի 3-ին ընդունված ՀՕ-49-Ն օրենքի խմբագրությամբ, մինչև 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՕ-211-Ն ՀՀ օրենքի 65 հոդվածի երկրորդ մասի ուժով 2009 թվականի հունվարի 24-ից ուժը կորցնելը, համապատասխանել է ՀՀ Սահմանադրությանը:	20 հոկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 834
112.	**«Փաստաբանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 14.12.2004թ.)**	5-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** «Քաղաքացիներ Հովհաննես Սահակյանի և Ռուբեն Այվազյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	14 հունվարի 2014 թվականի ՍԴՈ - 1135
		5-րդ հոդվածի 3-րդ մաս	**2.** «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ **<u>սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում</u>**:	5 ապրիլի 2016 թվականի ՍԴՈ-1263
		29.1-րդ հոդված	**4**. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 14.1., 18 և 19 հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***: **7**. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի	8 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 765

			և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձևով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:	
		45.6-րդ հոդվածի 1-ին մաս	**1**. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը՝ այն մասով ու մեկնաբանությամբ, որով արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական համարժեք որակավորում ունեցող անձի՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 43-րդ /2-րդ մաս/ հոդվածների պահանջներին ***հակասող և անվավեր***:	18 ապրիլի 2014 թվականի ՍԴՈ - 1148
113.	**«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 17.06.2008թ.)**	17-րդ հոդված <u>ՀԱՓ</u> 18-րդ հոդված	**1.** «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, ինչպես նաև այդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 18-րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը միայն **այն իրավակարգավորման շրջանակներում,** երբ Կազմակերպությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովի հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:	9 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ -1051